

9 (47.925)

Պ-30


Հրատարակութիւն տիկին ԱՆՆԱ ԱՌԱՔԵԼԵԱՆ
ՍԱՐՈՒԽԱՆԵԱՅԻ.

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ն Ի Ի Թ Ե Ր

1406

(Արատապաւած «Հովիւ» շաբաթաթերթից)

Հրատարակեց Եղիշէ ա. ք. Գեղամեանց



Исторические материалы, переп. изъ журнала «Овивъ»
Пирогоиер. Е. Гегамяницъ.

17644

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

Б А К У.



ТИПОГРАФИЯ „ТРУЖЕНИКЪ“ А. А. БУИВДЖИ.
1915 г.



Օ(7)
Գ-42

Հրատարակեց
1915

ԵՐԿՈՒ ԽՕՄՔ

Ալէքսանդրօպօլցի պ. Կարապետ Իսահակեանցը 1909 թւին մի մեծկակ ծրար էր ուղարկել ինձ ձեռագիր հին գրւածներով, որպէս զի «Պատմական քաղաքներ» գրելիս՝ օգտուիմ նրանցից:

Եւ ես օգտուեցայ, ինչպէս որ իրանց տեղերում յիշել եմ ի «Քաղաքներ»-ումս:

Յիշեալ գրւածներից Եփրեմ և Ներսէս կաթողիկոսի վերաբերեալներն՝ պ. Իսահակեանցի թոյլուութեամբ՝ ես ուղարկել էի արժ. Գիւտա. քահ. Աղանեանցին, որպէսզի ժամանակին կցէ յիշեալ կաթողիկոսներին նւիրելիք «Դիւան Հայոց պատմութեան» ապագայ հատորներին:

Իսկ այն գրւածներն, որոնք իրանց բովանդակութեամբ սերտ առնչութիւն չունէին թէ «Պատմական քաղաքների» և թէ «Դիւանի» հետ՝ այդպիսներն էլ ես նոյն 1909-ին տպել

աւի «Հովիւ»-ի մէջ «Պատմական նիւթեր» վերնագրով: Իսկ այժմ «Հովիւ»-ից արտատպելով առանձին հրատարակում, կցելով նաև միևնոյն բովանդակութիւն ունեցող Մելիք-Ջումշուտի նամակը, որ տպւած է «Իււան Հայոց պատմութեան» Ե. գրքում, եր. 394:

Հրատարակիչ

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԻԻՓԵՐ

Ա.

ԳԵՐԱՊԱՏԻ ԲԱՐՁՐ ԲԱՐԵՄՆՈՒՆԴ ԻՇ-
ԽԱՆԱՊԵՏ ԱՂԱ ՄԻՆԱՄ

Ակնկալութիւն ազգիս Հայոց եւ յսկապէս իմ որորւած եւ ամենաբարեւար ազնւագոյր սէր:

Իբրև զարեգակն փալի բարձր և ամենացանկալի անուն ձեր և ընդ ծագս աշխարհի բարեհաշակեալ քարոյի անզաղար յամենայն մտեղեաց. և զուք էք այսօր ակնկալութիւն մեր և յոյս և ձիւ օրհնութեան մնացեալ յողկուզաց յետևելեաց, ի վեհից նախնեաց յարանց քաջաց և օրհնեալ արմատոց:

Արդ՝ եթէ զուք, որ այսօր իբրև ծառ սաղարթախիս և պողպից ծողկեալ էք ամենազօր բազկա Բարձրելոյն և ունիք համարձակութիւն բարեխօսել փան ազգիս առ Աստուծա-

տիպ կայսրդ առատապարզի և բարերջանիկս
 առնել, և մենք մերով զանազան և ազգի քա-
 շագործութեամբ և մեծազոյն հաւատարմու-
 թեամբ մնայցեմք անվարձ և անպասկ յանկեան
 ուրեր և իբրև աննշան ոք և հասարակ անձն համարի-
 ցիմք, ապա երբ լինիցիմք բարեբաղդ և ճւղ յայտնի-
 ցեմք զցաւս մեր: Եթէ լուսահոգի Շահամիր աղային
 լսելով զմեծագործութիւն Ղարաբաղու մելիքա-
 ցըս՝ ցնծայր հոգի և զանազան կերպիւ ուժտու
 լինէր մելիքացս, դուք որ այսօր ողորմածու-
 թեամբն Գրիստոսի առաւել էք քան ցնա փա-
 ոօք և պատուով, որչափ առաւել պարտիր ձեռն-
 տու լինել մեզ, բարերջանկութեան մերոյ ցան-
 կալ, և չթողուլ զի աշխատանք մեր և անուն
 ընդ վայր կորիցէ, և իբրև աւարի ոք վատա-
 համբաւ մեռանիցիմք:

Մեծազոյն հաւատարմութիւնք իմ առ
 սուրբ Աթողդ ոռւսաց, և քաջութիւնք իմ առ
 Զուպով զօրապետաւ, որ ի Շուշի յայտնի են
 ամենից, գուցէ և ձերդ վեհանձնութեան, թէ
 զիարդ հօրն այն Վիթխարի աղա Մահմադ խան
 շան ամօթապարտ կոր ի գլուխ յետս դարձու-
 ցոք, և զամենայն գօրութիւն նորին թողնեցու-
 ցեալ ցան ու ցիր յերես երկրի սփիւռ տարա-
 ծեալք: Նմին իրի արքայն Հերակլ՝ ցանկացեալ

առնել զմեզ ինքեան պաշտպան՝ երգմամբք
 և թղթովք հաւատարմացոյց մեզ զալ
 առ ինքն և բնակել յերկրի իւրում. և համար-
 լիլ ընդ զխաւոր թաւատան և կնեազան իւր, որք
 և եկաք և ըստ խոստման իւրում ետ մեզ Բօլ-
 նիս անւանեալ տեղին, և ի պալատի իւրում
 բարձրագոյն քան զամենայն երևելիս իր յառ-
 կացեալ կայր վասն մեր տեղի, և այնպէս էաք
 մինչ ցվախճան Հերակլեայ և Գէօրգիայ: Այժմ
 ոչ հոգի տէր եմք և ոչ կալւածոց և ոչ թէ
 պատուոյ, զի ամենքեան նեղեն զմեզ, և յա-
 փշտակել ջանան զՊօլնիսն և տասանորդս պա-
 հանջեն ի վաստակոց մերոց: Վասնորոյ բոլորս-
 վիմք զդեալ բնաւին ոչ կամիմ բնակիլ անդ,
 զի այժմ մինչ ետ շինութեամբ և բարութեամբ
 լցի, և զամենայն աւաղակս և զթշնամիս անտի
 վանեցի՝ տեսրք բազումք յայտնեցան, մինն
 սաէ՝ թէ այն ջուրն իմ մուլքն է, միւսն սաէ՝
 թէ այն սարն իմն է, իսկ այլ միւսն՝ այն հողն
 իմն է և տասանորդս խնդրէ թէ ի ցորենոյ և
 թէ ի խոտոյ: Ոչ թողուն զմեզ վարել. ոչ թո-
 դուն խոտ հնձել և ոչ թողուն զի հօտք և անդ-
 կայր մեր ճարակեսցին, վասնորոյ ամենայն ա-
 նասունք մեր սատկեցաւ և մենք կամք երեք-
 եալ և տատանեալ, և յայսմ ամի առանց վար-

ուցանքի մնացեալ: Վասնորոյ եթէ ամենայն քարինք Պօլնիսոյ յոսկի գարձցին՝ հրաժարելով հրաժարիմք. ոչ փող մնաց ի քսակի մերում, ոչ ամօթ յերեսս մեր և ոչ սիրտ համբերելոյ այսպիսի անտանելի թշւատութեանց, զի միշտ ի դրունս դատաստանաց մաշիմք և չունիմք ուտեք մեզ օգնութիւն: Վասն այսորիկ անա գազերս մատուցի Նորին Կայսերական Մեծութեան, զի ի գութ շարժեալ՝ հրամայեացէ մեզ երթալ ամենայն ժողովրդով մերով ի հայրենի երկիր մեր ի Ղարաբաղ և անդ բնակիլ և զարգարել շինութեամբ և որպէս խոստացեալ եմ Կայսերն իմոյ թղթով, այժմ ես գնոյն ուխտեմ և խոստանամ կատարել վասն շահաւէտութեան արքունի գանձարանին:

Մելիք Ջիմշուզին հրաման եղաւ գնալ յերկիր իւր, մեզ ընդէ՞ր ոչ լինիցի: Վասն որոյ խնդրեմ, ողորմած տէր, զի յամենայն գորութենէ և յամենայն սրտէ գուն գործեալ, և ի տեղի մեր բերան և լեզու եղեալ՝ փոյթ տարջիւր այս՝ ոչինչ խնայել ի ծախս, զոր ունիմք շնորհակալութեամբ հատուցանել զամենայն ծախսն, որք լինիցին վասն այսմ, և մնալոց եմք զամենայն ժամանակս կենաց մերոց պարտաւոր ձերզ ամենամեծ բարեբարութեան:

Հերակլ արքայն բաց ի Պօլնիսայ՝ խոստացաւ մեզ Աձ (մի հարիւր) տուն ճորտ ի քաղաքիս ևս տուն և տան տեղի մեզավայել, բայց ինքն վախճանեցաւ և մեք փոյթ չտարանք հոգալ, որպէս անա նորին թղթոյ կապիսն առաքեցաք ընդ թղթոյս առ ձերզ վեհանձնութիւն ի գիտել: Ունեաք պատիւ առաւել քան զթաւադան և զկնեսագան ի ժամանակս նորա, այժմ ի ժամանակս սոցա յետին մութիկի չափ էլ չեմք: Գեօրզի արքայն առեալ էր մեզ քեարվանդաշութիւն, որով ամենայն տարի հինգ հարիւր թուման արգիւնք լինէր մեզ: Այն ևս զկնի վաղճանի նորին ի ժամանակս սոցա կորեաւ, որ այժմ մէկ փողի արգեանց տէր չեմք:

Յիցիանովին յայտնեցաք Գեօրզի արքայի թուղթն, խոստացաւ մեզ գրել առ Կայսրն, և փոխանակ քեարվանդաշութեան տօնուղ և աստիճան վասն մեր հաստատեալ, այն ևս մնաց այնպէս կիսակատար, ինքն մեռաւ և Գեօրզութուղթն մնաց ի նորին կանցելարի:

Այլ և թէ որքան հաւատարմութիւն եմ արարեալ ողորմած Կայսերն իմոյ՝ ոչ մինն յայտնի չէ եղեալ տէրութեան՝ ես զի՞նչ արարից: Միմիայն անդրանիկ որզի ունէի մուստով:

Բէկ, որդի ծերութեան իմոյ և ժառանգ նախնեաց իմոց, այն ևս զո՞ն մատուցի ինքնակալ կայսերն իմոյ Ամենամեծի. քան զայս աւելի ոչ ոք կարէ առնել, զոր ես արարեալ եմ, և այսմ ևս առնեմ. մէկ կաթիլ արիւն ունիմ, այն ևս ամենայն ժամու ի պատրաստի կամ հեղուլ վասն անւան ողորմած կայսերն իմոյ. այլ քան զայս առաւել զի՞նչ արարից՝ չգիտեմ: Երևի ճշմարտապէս զի հայ եմ, վասն այնորիկ նախանձին ամենայն կուսակալք և զօրապետք տէրութեան ընդ յառաջագիմութիւն իմ և քաջագործութիւն, և ոչ կամին յայտնել ստուգութեամբ ում հարկն է, զի այսպէս մնացեալ յուսահատեցայց և փշացայց. Աստուծով այսուցաւով չեմ մտանելոց ի գերեզման և չեմ յուսահատեալ փշանալոց, որպէս մինչ ցարդ գործեալ եմ զմեծամեծս, այլ ևս Աստուծով գործելոց եմ գնորանորս ի սքանչացումն լսողաց և տեսողաց, և արիութեամբ և քաջութեամբ ի հող մտանելոց, և ոչ իբրև անգօր և տկար յանկողնի մեռանելոց և մուրթաթ (!) սատակելոց:

Ի ժամանակս Գեօրգի արքային՝ ի մինիստրութեան Կավալենսկուն թէ զինչ եմ գործեալ և որքան հաւատարմութիւն արարեալ բարերար տէրութեանդ այգմիկ, կարէք գիտել ի թղթոց

նորին Կավալենսկուն, զոր ընդ գրոյս առաքելի առ ձեզ:

Յիցիանովին և իւր բոլոր զօրացն կենաց և փրկութեան ես եմ եղեալ պատճառ՝ առաքելով աստի յԵրևան հաց, բարութ և զիւլլայ ձեռամբ իմ քաղցր միածին անդրանիկ որդի Ռուստոմբէկին հանդերձ յիսուն վաթսուն իմոյին քաջ արամբք: Աստուծոյ ողորմութեամբ ի կէս աւուրն բարութ զիւլլայն և հացն է հասեալ Յիցիանովին Ռուստոմբէկիւն և ի նոյն զիշերի շահքն է եկեալ յանկարծակի բազութեամբ անհամար զօրաց ի գերայ Յիցիանովին, մտածելի է, եթէ չէր հասեալ վեց սահաթ յառաջ Ռուստոմբէկն՝ զի՞նչ էր լինելոց նոցա կեանքն:

Այսու ոչ շատացեալ՝ կրկին առաքեալ էր Յիցիանովն զորդին իմ իւր մարդովք ի Ղարաբիլիսայ և այլուր, որք և ի ճանապարհին քսան, երեսուն հազար զօրաց պատահելով՝ ոմանք ի մարդկանցս նահատակեցան յանուն ինքնակալիս ամենայն ուռսաց, և զոմանս կապեալ և Կաշկանդեալ շարաշար կապանօք խաղացոցին ի Գուրէթ հանդերձ իմ անդրանիկ որդի Ռուստոմբէկին՝ իբրև զոչխար ի սպանդ, ուր և կոտորեցան ազգի ազգի սանձանօք և շարաշար

մահվամբ վասն ինքնակալ ամենագլխած Կայսերըն ամենայն ուռուաց. և որպէս որդիս գնաց, և վաթսուն մարդն ևս ընդ նմա գնացին իւրեանց ձիովք, ապրանքով, զինուք, սրովք և ամենայն իրօք և թէ որքան վնաս եղև ինձ այսու, թողում ձեզէն քննել, և ինձ ցաւօք և վըշտօք լցելոյս ցաւակից և վշտակից լինել: Եւ այսոցիկ ամենայն պրեցելոցս՝ բաց յայլոց՝ կենդանի վկայք են յԱստուածակոյս կողմանէ ղենեւալ պարսն Տուզկովն և պարսն Լեոնգովն:

Պարսն Վօլխօնսկուն թէ զինչ հաւատարմութիւն եմ ցուցեալ՝ թող ինքն վկայեսցէ:

Սոյն այս կուսակալ գրաֆ Կուսովիչիս ևս ոչ պակաս ծառայութիւն ցուցի ի վերայ ամբողջին Ախալքալաքու զգօրս օսմանցւոց սատակելով. և մինչև յԱխալքալայ գահ և գերկիւղ գամենեքումքք արկանելով կային: Սա ևս նման միւսոցն ոչ գիտաց և ոչ շնորհակալ եղև, և ոչ Կայսերն յայտնեաց ինչ վասն մեր:

Ի յանձնարարութեանց ձերոց ոչինչ շահ յառաջացաւ, զի թէպէտ թուղթ ողորմած տեսանդ իմոյ ևս ինձ, ասաց թէ՛ աղա Մինասն բո յանձնարարութիւն արար ինձ կայն, բայց արժանի և շահաւէտ պտուղ ինչ ոչ եցոյց:

Քանիցս խնդիր մատուցի թէ՛ հրամայեա մեզ գնալ ի Ղարաբաղ, ի հայրենի աշխարհ մեր նման Մելիք-Ջիմշուաին, որ հաճեցաւ թէ դուք որ երթայք Պօլնիս գիւղն աւերի, ախալցխացիք և լէկղիք կայլ գողք և աւագակք յաւարի առնուն զըրջակայ գիւղօրայս թիֆլիզու: Իսկ մինչ ասեմք, թէ որպէս արքայն Հէրակլ տուեալ էր մեզ զՊօլնիսն շրջակայ հողովն և ջրով և ամենայն իրօք, դու ևս նման նմին գնոյնն հաստատեա, պատասխանէ մեզ, թէ ոչ կարեմ այլոց մուլքն քեզ տալ կայն, գորով և զանց առնեմ չտալ պատուական լսելեաց ձերոց զտաղակութիւն:

Արդ՝ զորս ինչ խնդրեմ այժմ՝ ի նորին Կայսերական Մեծութենէն միջնորդութեամբ ձերով:

Նախ՝ հրամայել մեզ և ամենայն ժողովըրդոց մերոց գնալ ի Ղարաբաղ ի հայրենի աշխարհ մեր որպէս ի վերդ գրեցաք. մեզ ոչ Պօլնիսն է պիտոյ, ոչ Աճ (հարիւր) տուն ձորսն և ոչ ի մէջ քաղաքիս (Թիֆլիզում) տուն և տեղի զորս աւեալ էր մեզ արքայն Հերակլ:

Երկրորդ՝ վասն մեր պենցիա հաստատել ի տեղի քեարվանսպաշութեան, զոր աւեալ էր մեզ

արքայն Գէօրգի, որով տարին հինգ հարիւր
թուման ստանայաք, որպէս և Յիցիանոֆն խոս-
տացեալ էր, զոր ի վերոյ գրեալ եմք:

Երբորդ՝ վասն մեր աստիճան պօլիովնիկ-
ութեան հաստատել վասն ամենայն հաւատար-
մութեանց իմոյ, ըստ զօրութեան թղթոյ ար-
քային Հերակլայ և ըստ խոստման Յիցիանո-
ֆին:

Եւ չորորդ՝ որովհետեւ իմ Ռոստոմ-բէկ որ-
դիս հանդերձ իր վաթսուն քաջ արամբք զոն ե-
ղեն յանուն Ինքնակալիդ, և զրկեցան ի կենաց,
և ի պսակաց՝ տեղի նոցա խնդրեմ չին մայեօ-
րութեան վասն իմ որդի Եսայի-բէկին և վասն
իմ քեռի որդի Անամ-Բէկին Մելիք-Մէջլում-
եան:

Չայտոսիկ զամենայն ի բարերար տէրդ եմ
արարեալ ապաստան և բարի կամաց ձեր յանձ-
նեալ ըստ ամենայնի:

Մնամ բազում յուսով եւ ակնկալութեամբ
որ ըստ օրէ սպասեալ ամենախոնարհ ծառայ
ձերդ վեհանձնութեան՝

Մելիք-Ապով Մելիք-Յովսէփեան Ղարաբա-
ղու *)

Ի նոյեմբերի 23, 1807 ամի:

Թիֆլիզ:

Բ

«... Երբ տեսաք, զի բռնութեամբ տանել
կամէին զարկղն փախուցեալ, ապա մեք ընդ
Յովհաննէս Արհւոյն ի տան ձ. ապեալին (հա-
րիւրապեալին) բացաք, որ էր այսինչ**):

*) Լաւ յիշում եմ, որ հանգուցեալ Երիցեանի
«Кавказская Старина» ամսագրում մի ժամանակ Ղա-
րաբաղի մելիքների միջանի նամակները տպւեցան
սուսերէն: Ձեռքիս տակ յիշեալ թերթն այժմ չունենա-
լով չեմ յիշում Մելիք-Ապովի այս նամակն էլ տպւած
էր թէ ոչ: Յամենայն գէպս՝ հայերէնի տպագիրը աւե-
լորդ չէ ըստ յիս:

**) Իմ «Պատմական քաղաձներից» (տես պրակ
Բ, Եր. 74—80) ընթերցողը գիտէ, որ իշխան Յիցիա-
նովը 1804-ին և ժենեռալ Նէսովետայեվը 1805-ին Մայր
Աթոռի հարստութիւններն արկղներով և կապոցներով
հեաները Թիֆլիզ տարան:

Իրանց ցուցակը իշխան Յիցիանովը վերջերում
կապմել տւեց. (տես АКТЫ II, Եր. 276—278 №№ 543 և

1 Ասուածամուխ և հրաշագործ զեղարդն սուրբ:

2 Ականակուռ կենաց փայտ սուրբ Նշան:

3 Բ. (երկու) հատ սոկեայ բուրվառ:

4 Բ. հատ ժամացոյց ականակուռ յոյժ զարմանալիք:

5 ԻԱ (21) հատ ազնիւ մատանիք:

6 Ա. (մէկ) հատ ևս եազուլթ մատանի շատ մեծ և Դ (4) կողմն բոլիանդ արմազ յատուկ ամանով:

7 ԺԲ (12) հատ թասպան (համբիշ) մեծահատ մարգարիտ, որոց գլուխն ակնակապ, միացուցած և այսպէս զրեալ թէ հանգուցեալ մահտեսի Մարթայի յիշատակն է:

545): Սակայն այդ ցուցակը չէ համադատասխանում միաբանութեան ցուցումներին, որոնցով նրանք իրանց մամուտը նամակներով (տես «Դիւան Հայոց պատմ.» Ե. եր. 441—446) բողոք էին բռնում: Կազարեան իշխաններին ի Մոսկու: Այժմ պ. Կարապետ Իսահակեանի ինձ ուղարկած թերթերից դուրս եկաւ այն այս ցուցակը, որ մենք սպաղբութեան ենք աւալիս: Այս ցուցակով միանգամայն հաստատուում է էջմիածնի միաբանութեան բողոքի ճշմարտութիւնը և Յիցիանովի կազմած ցուցակի կատարեալ թերութիւնը:

8 Ա. (մէկ) քիստաքամար մուշամբալի եալ-յուզ ոսկի:

9 Ա. (մէկ) փոքր զուլթի ևս լի պաշախ-լով:

10 Ա. (մէկ) մուշամբայով մինչև ԲԹ (երկու հազար) հատ Պօլսի ոսկի:

11 Ա. (մէկ) խառել (գրանքա) մարգարիտ:

12 Զ (վեց) հատ գաբալայք Եղվարդայ գիւղին և այլք:

13 Բ (երկու) հատ ձեռնադրութեան գիրք:

14 Ե (հինգ) փիլոնացու չեչակլու (ծաղկեայ) աթլաս:

15 Ա. (մէկ) հատ ազնիւ դուրբին (հեռագիտակ):

16 Բ (երկու) շուշո թանձր խաթայի (??):

17 Բ (երկու) հատ լաւ փանգահր (??):

18 Ա. (մէկ) մեծ շուշայ ծիլ ոսկի:

Եւայլ մանր քսուր շատ. այսոքիկ լցեալ և Ստեփան վարդապետի կնքովն կնքեալ յդեալ էր: Յոռաջ քան զայս շատ է յդեալ, բայց սուրբ զեղարդն հրաշագործութեամբն իւրով յայտնեաց զօրաց ականատես գալով քեալ Յովհաննէսն:

1406

~~444~~

444

MUSEUM * 1905 * 1905 * 1905

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳԼԽԱՎՈՒՄ 1905

Զորարս... (չէ կարգացում), Յովհաննէս, Եղիազարեան Գրիգորս, Մելիքսեդան Գէորգս և Տէր-Նահապետեան Ստեփաննոս վկայեմք, զի զայսոսիկ լուեալ՝ որպէս կամիք այնպէս հոգաւջիք և լերուք ողջ ի պարծանս մեր»:

Այստեղ վերջանում է միաբանութեան ցուցակը, որի թւահամարները բնագրում չկար, այլ մենք ինքներս գրինք: Եւ համեմատելով միաբանութեան այս ցուցակը՝ իշխան Յիցիանովի կազմած ցուցակի հետ՝ գտանք, որ 1, 2 13 թւահամարների տակ գրւածները միմիայն կան Յիցիանովի ցուցակում, իսկ միւսներն, որ կամ դրամ են, կամ թանկագին առարկաներ, ամենեկին չկան:

Պ. Իսահակեանցից ստացւած թղթերի մէջ կար Յովհաննէս արքեպիսկոպոսի (վերոյիշեալ ցուցակը կազմողի) մի նամակը գրւած Մինաս Լազարեանին յամին 1807 յուլիսի 27-ին, Թիֆլիզից, ուր Յովհաննէսը այդ միջոցին հայոց առաջնորդն էր:

Նամակից, ի միջի այլոց, երևում է, որ Դանիէլի խնդրանաց՝ վերադարձնելու էջմիածնին՝ այնտեղից տարւած հարստութիւնը՝ գրաֆ Գուգովիչը «գրով հրամայեալ էր, — գրում է

Յովհաննէս եպիսկոպոսը, — թէ վասն խնդրոյ սրբազան Կաթողիկոսին՝ ի զգեստուցն սրբոյ Աթոռոյն այն գոր ինչ հասարակ է և յոյժ հարկաւոր Հայրապետին մասնաւոր ինձ առաքեալ, իսկ այնք, որք թանկագինք են՝ թող մնասցէ, մինչև տեսցուք թէ որպիսի գրութիւն լինելոց է ի մէջ մեր և ի մէջ պարսից:

«Սրբազան Հայրապետն այժմ, — շարունակում է Յովհաննէս արքեպիսկոպոսը, — ոչ զայլ ինչ գանգատէ, եթէ ոչ միայն դատարկութիւն սրբոյ աթոռոյն:

Եւ մին սիայի (ցուցակ) էր առաքեալ՝ թէ զայսոսիկ պարտիս առաքել այտի, բայց տեղս ոչ մինն գտանի»:

Նոյն եպիսկոպոսի և նոյն իշխանին ուղղած մի այլ նամակից, գրւած 1807 փետրւարի 2-ն, երևում է, ի միջի այլոց, որ Գուգովիչը զիջանելով նրա թախանձանքին՝ «շնորհեաց մեզ որքան ինչ եկեղեցական զարգս խնդրեալ էաք, և ի կողմանէ խորջի (ծախքի) ի գումարէ գրամոցն սրբոյ Աթոռոյն մեր, որ կայ ի կայսերական գանձարանին, յոսկւոյն մեր (շնորհեաց) զայնքան ինչ, որ ըստ հաշւոյ տեղւոյս գրամոց պարտ էր լինել ԲՃ (200) թուման, որ յետոյ

ի սպիտակացուցանելն մեր՝ ոչ եղև այնքան, այլ պակաս: Ինչևիրցէ. առեալ մեր գայն սուրբ ի տեղի պարտուց մերոց, ևս արարաք ծախս վասն միաբանութեան», որ—պէտք է աւելացնենք մենք, Դաւթի ձեռքից փախած էջմիածնից Թիֆլիզի առաջնորդին էին ապաւինել:

Պ. Իսահակեանցի թղթերում մենք գտանք մի այլ, իսկական նամակ, գրւած Մինաս Լազարեանին Թիֆլիզից 1805 յուլիսի 31-ին: Նամակը գրողներն են՝ Գրիգոր արքեպիսկոպոս պատրիարք Կոստանդնուպոլսոյ, Բարսեղ եպիսկոպոս սրբոյ էջմիածնի և Յովհաննէս արքեպիսկոպոս առաջնորդ Թիֆլիզու, Ելիսաւետապօլու և Կախէթու հայոց»:

Այդ նամակում ի մէջի այլոց, կարգում ենք՝ «Վասն սրբոյ գեղարդեանն և այլ մասանցըն գրեալ եմք քանիցս, զի շնորհօքն Աստուծոյ և բարերար ակնարկութեամբ կուսակալ կնեազ Յիցիանովին ունիմք առ մեզ ի մէջ սուրբ եկեղեցւոյ՝ մեր այս վանիցս՝ յորում մերս եմք բնակեալ. իսկ այլ իրքն գտանին ի գանձարանի նորին Կայսերական Մեծութեան: Վասն սոյն մասանց և իրանց թէպէտ քանիցս գրեալ եմք առ վեհազնեայ բարերարդ մեր, այլ հետ

այսոցիկ՝ առաջին գրով մերով չունիմք մատուցանել ձեզ զօրինակս գէֆթերին, զոր ինչ մի անգամ հասոյց ի քաղաքս եներալ Նէսվէտայովն, նաև զօրինակս գրոյ նորին գերազանցութեան, զնր երէկ ստացաք, և զօրինակ նոյն պօլիի քանանայ տէր Ալէքսի արժանապատիւ անձին, որով վկայէ ասուածասիրապէս վասն եղանակի շարժութեանց ենարալին այնօրինակ, ի տնօրինելն զիրան զոր բերեալ ունէր անդ ի Բամբակաձոր: Մատուցանեմք և զօրինակ գրոյ ուրեմն հայի, որ գնեալ է գտուփ մի աննող զորից մասանց և գերկու շուրջառ 30 ոսկով. ծանուցանեմք և վասն ոսկի խաչին և էլմաս մատանւոյն, զորս գնեալ է գինեվաճառ ոմն հայ և վաճառեալ այլոց ումեմն հայի 17 ոսկւով, նաև միւս եազութ մատանի և եշիմ գաւազանի զլսոյ զորս նոյն գինեվաճառն եբեր առ մեզ: Իսկ այժմ քանզի գէֆթէք իրանցն և յիշատակեալ գրութիւնքն չէին ի պատրաստի՝ այնքան ինչ ի նշանակ միայն բաւական եղիցի»:

Յովհաննէս եպիսկոպոսի մի նամակում («Դիւան» ե. գիրք, եր. 449) ասուած է թէ՛ Նէսվէտայեվը Թալին գիւղից «գրէ աստ (Թիֆլիզ) առ կնեազն (Յիցիանով) թէ սուրբ գեղարդըն, սուրբ Լուսաւորչի աջն և ի մէջ արխա-

լուզի միոյ բազում ոսկի և այլ ինչ պատու-
կանք անկաւ ի ձեռս մեր, որք ամենեքեան
կնքեալ մնան առ մեզ»:

Այդ ինչպէս և ինչ կնքած են եղել,
«որ ի ճանապարհին գոհար ակն քանի մասա-
նիք վաճառեալ է ի մէջ զօրացն»,—ինչպէս
գրում են Եփրեմ արքեպիսկոպոսին Մտեփաննոս
եպիսկոպոսը և Կարբեցի Յովհաննէս վարդա-
պետը («Դիւան» գիրք, ե. եր. 446) և ինչպէս
գրում են Մինաս Լազարեանին վերոյիշեալ ե-
րեք եպիսկոպոսները:

Ներսէս Աշտարակեցու ձեռքով (հաւանա-
կանաբար Յովհաննէս արքեպիսկոպոսի անունով)
Մինաս Լազարեանին գրւած մի նամակի սեա-
զրութիւնից երևում է որ ժեներալ Նէսվէտա-
յեվը Էջմիածնի գանձը վերցնելիս չէ կամեցել
առտեղեաւն ցուցակ կազմել, այլ «խոստացաւ
գերազանց եներալն թէ ի ճանապարհին ունիցի
զթէֆթէր առնել, առ այն ուրեմն և մենք ևս
յամենայնի իշխանին ակնադէտ լինեաք, թերևս
արասցէ որպէս խոստացաւ, այլ տեսաք չի յա-
մենայն իջևանի ինքն միայն ընդ իւրոցն բաց-
եալ ունէր զոր ինչ և առնէր և մեզ ամենեկին
ոչ երբէք մերձեցոյց մինչև ցվախճան: Իսկ

իբրև ժամանեցաք ի Ղարաքիլիսա, յետ երկուց
և երից աւուրցն կոչեցին զմեզ ի սունն ենարա-
լին, ուր կայր ժողովեալ բազմութիւնք ուստաց
(ուսաց) և բացեալ տարածեալ ի հրապարակի
տնդ զամենայն սուրբ մասունս ընդ որս էր և
Յովհաննէս վարդապետն Կարբեցի, (յետոյ կա-
թողիկոս) չև ևս անցեալ ի վերայ 5 ըոպէ, ել
արտաքս Յովհաննէս վարդապետն, յետ նորա
ստն կացի և ես զի ելից, և ստիպեցին զիս
նստել հայել յայնս զորս կամցին գրել. այլ ոչ
յօժարեան ելի և ես արտաքս: Եւ յետ աւուրց
ճանապարհորդեալ եկաք ի Թիֆլիզ քաղաք»*):

Այս նամակը այլևս ոչ մի կասկած չէ
թողնում, որ ուսս ժեներալը իր բերած գան-
ձից ճանապարհին հանել է մեծագին իրե-
զէններն. իսկ Ղարաքիլիսայում ձեռնարկել
է ցուցակագրելու միմիայն մասունքներն ի ներ-
կայութեան Յովհաննէս վարդապետ Կարբեցու
և Յովհաննէս եպիսկոպոս Գեղարզակիի, որոնք,
սակայն զլիս ընկնելով, որ ժեներալ Նէսվէտա-
յեվը լսկ ձեականութեան և զլիսաւորապէս իր
յամիշտակութիւնը ծածկելու նպատակաւ և եթ

*) Երեցեան Ներսէս Հինգերորդի կենսագրութիւ-
նը: Թիֆլիզ, 1878, եր. 45:

հրաւիրել է իրանց ցուցակագրութեանը ներկայ
ու վկայ լինելու, — թողել և մէկգմէկու քամա-
կից հեռացնել են ժեներալի անից:

Չնայելով ալս ամեն յափշտակութիւններին
— այնուամենայնիւ պէտք է որ բաւականին
կանխիկ գրամ (ոսկի) հասած լինի թիֆլիզ և
այնտեղ արքունի գանձարանին պահ տրւած
յանուն էջմիածնի: Եւ թէպէտ այդ գումարի
քանակութեան մասին՝ ոչ մի տեղեկութիւն
չունինք գրականութեան մէջ եղած պաշտօնա-
կան և անպաշտօն զօկումենտներից, — այնուա-
մենայնիւ այդ քանակութիւնը պէտք է, որ բա-
ւականին խոշոր եղած լինի:

Պ. Կարապետ Իսահակեանցի մեզ ուղար-
կած ծրարում կայ ներսէս եպիսկոպոսի (Աշ-
տարակեցու) իսկական մի նամակը, որ նա
1809 թւականի յունւարի 19-ին էջմիածնից
գրում է Մոսկւա Լազարեան Մինասին: Ի միջի
այլոց Աշտարակեցին յայտնում է որ միաբա-
նութիւնը գրել է և խնդրել է կառավարչապե-
տին «փասն տալոյ եփրեմ սրբազանին (որ կա-
թողիկոս էր ընտրւած) ի թիֆլիզի գանձարանն
գտանեցեալ յարդեանց Աթոռոյս 10 հազար
ուրլի»:

Տրւեցաւ թէ ոչ այդ գումարը եփրեմին,
յայտնի չէ: Այսքանս միայն յայտնի է, որ հայ
հոգևորականութիւնը, իր ժամանակին, հիա-
սթափւած էր ուսու իշխանաւորների վարմուն-
քից: Եւ Դաւիթ կաթողիկոսը, Երեւանից իր մի
բարեկամին գրած նամակում, իրան իրաւունք
էր համարում գրել թէ՛ «ո՞վ կարէր իմանալ և
ո՞ւմ ումեք լինէր կարծել թէ նա ինքն ենարա-
լըն (Նէսվէտանֆու) ունէր գորօք իբրև գերօստ-
կրս յարձակել յառկաբար ի վերայ սրբոյ Աթո-
ռոյն էջմիածնի և աւար հարկանել գնա»:

Գ

«Ի սուրբ կաթողիկէն էջմիածին *), յերն

*) Ի նկատի ունենալով այն հոգածողութիւնը որ
ներկայումս արտայայտուած է Մայր Աթոռի վարչա-
կան և մանաւանդ անտեսական վիճակի նկատմամբ՝
մենք աւելորդ չհամարեցինք հրատարակել եփրեմ կա-
թողիկոսի օրով սահմանուած այս կանոնները, որոնք
պարզ գաղափար են տալիս Մայր Աթոռի անտեսական
վիճակի մասին՝ մօտ մի դար առաջ:

Այս թուղթը, որ պատճէն չէ, այլ բնագիր, մենք
գտանք պ. Կարապետ Իսահակեանցի մեզ ուղարկած
թղթերի միջից, որոց մասին նախընթաց նամակումս
մանրամասն տեղեկութիւն եմ տւել:

նոյեմբերի 1820. ժողովեալ անդամոցս մեծի խորհրդարանի գերագահ սրբոյ Աթոռոյս, ըստ ակնարկութեան Ամենասրբազան Հոգևոր Տեսան մերոյ՝ վասն պակասեցուցանելոյ զաւելի յուսպէտ ծախս Տանս սրբոյ, յայսպիսի անեկամուտ և ի պարտալիբ ժամանակիս, համական խորհրդածութեամբ և ստորաստական հաւանութեամբ իւրաքանչիւրացս՝ նախ պատուական Գլխոյն մերոյ, և ապա մեր, զմի ըստ միտջէն ի ամին, յորում և կնքեցաք ստորագրութեամբ հանդերձ, որք են այսոցիկ.

1. Խիլայել մի լիցի ոչ գհայս և ոչ գտաճիկս, բայց ի ծանր հարկաւորութեան ըստ պատշաճին և այն՝ խորհրդեամբ ժողովոյն լինի:

2. Ընծայ տալն յազազս հարսանեաց կամ սպաւորաց բնաւ մի լիցի:

3. Հայ կամ թուրք ի բերեին ընծայ ինչ չնչին՝ ակնարկութեամբ մեծ պարգևի, ոչ ընկալցի: Նոյնպէս եթէ յԵրևանայ պատահեսցի եկող այնպիսի ընծայիւք, ոտից վարձն միայն աւեալ ի յետս դարձուցի:

4. Ի պատահիլ հիւրոց ի Ղազարապատ՝ մի

կամ երկու օր թուցի մնալ, եթէ չունիցի զծանրը ինչ հարկաւորութիւն գործոյ:

5. Հասարակ միաբանից վեղարաւորաց և գտակաւորաց մի տացի չուխայ կամ վեղար և կամ փիլոն առանց արժանաւորութեան և ի տալն խորհրդեամբ Սիւնհոգին լիցի:

6. Արկղ գրամոց լիցի ընդ կնքով Հոգևոր Տեսան մերոյ, տեղապահին, աւագ լուսարարին տեղապահի երկրորդին և գանձապետին:

7. Յիւրաքանչիւր եօթնեկի աւուր չորեքշաբթի վերոգրեալ չորեքին արքեպիսկոպոստունքն յատկապէս ժողովեցին վասն վերահասութեան գործոց և կառավարութեան ամենայն գործակալաց և իմանալոյ գելն ծախուց սրբոյս Աթոռոյս, և յամսէ ամիս բոլոր անգամբք սուրբ ժողովոյն վերահասու լիցին իրացն ստուգութեան:

8. Կարգեցաւ նաև ընդ իշխանութեամբ Տեղապահին բազկակից և գործակից երկրորդի Նորին Անտօն արքեպիսկոպոսն միայն ի գործ շտեմարանապետութեան, ընդ իշխանութեամբ որոյ պարտ է լինել որ ինչ մի անգամ պաշտօնն իւր պահանջէ:

9. Ամենայն կառավարութիւնը գիւղին և շուկային եղիցին ընդ հրամանաւ Տեղապահին և երկրորդի նորին, զորոց միայն գիտացեն:

10. Աթոռակալն մի իշխեսցէ աւելի քան զհինգ թուման տեղւոյս զբամ ծախել առանց գիտութեան Սիւնհոգին:

11. Գործեսցէ վերահասութիւն ժողովն և գիտացէ թէ որքան տավար, սշխար, գինի և այլ իրք գտանին յԱթոռս և յորքան արտաբուստ գայ, որով լիցի նոցա, թէ որքան և որչափ է ծախան:

12. Պարտ է գի վերահասու լիցի ժողովն բովանդակ մտից զբամացն որ յամենայն տեղեաց, նաև ելիցն իսկ:

13. Նաև պարտ է գիտել խորհրդականացն զսրբոյ Աթոռոյս գիւղօրէից, զանդաստանաց, զՉրաղացից, զՃիթանաքից, զԳնկից, զայգեաց և զպարտիզաց և այլ նմանեաց զոյացեալ իրացն տարեկանաց վերահասու լինել յատկապէս և այսոցիկ տեղեաց զործակատարքն և կառավարիչքն մի իշխեսցեն գործել ինչ առանց խորհրդոյ և առաջադրութեան Սիւնհոգին:

14. Ունիցի աւագ լուսարարն սպասաւորս

եկեղեցւոյ՝ մէկ արեղայ, երկու տիրացու և մէկ մուղղուսի:

15. Արժան է հետամուտ լինել և արտաքսել ի սրբոյ Աթոռոյս զգտանեցեալսն ի ներքս և յարտաքին պարսպին զայնպիսիս, որք չեն իմիք պիտանացու եթէ եկեղեցականք իցեն և եթէ աշխարհականք, զի մի վայրապար մասրաֆ լիցի վասն նոցին:

16. Ըստ այնմ նաև յայլ և յայլ կողմանց զեկեալսն յայնպիսեաց ոչ ընդունել բնաւ ի ներքս:

17. Եւ ի վերայ այսորիկ ամենայնի յամենայն նւիրակելի վիճակս, յորս չունիմք այժմ նւիրակս՝ հոգ տարցի անպատճաւ յղել:

Ահա այսոքիկ են ընդ որս հաճեցաւ սրբազնազոյն Հոգևոր Տէրն մեր և Հայրապետական կնքով կնքեաց ի սմին, հանդերձ ստորագրութեամբ, ընդ ում համաձայն կնքեցաք և ստորագրեցաք մեք անդամք սրբոյ խորհրդարանի, որք ի սուրբ Աթոռն էջմիածնի»:

Այս կանոնների ճակատին գրած է կաթողիկոսական կարմիր կնիքը, որի տակը գրած է՝

«Եղիցի եղիցի» Ե. Կ. (Եփրեմ կաթողիկոս): Իսկ կանոնները տակ իրանց անւանակոն կնիքները դրել են և ստորագրել են՝ Տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոս, Անդրէաս արքեպիսկոպոս, աւագ լուսարար Գրիգոր արքեպիսկոպոս ժամօրհնող Փիլիպպոս արքեպիսկոպոս, Սիմէօն եպիսկոպոս Բզնունեան, Անտօն արքեպիսկոպոս Մոյնեցի, Եփրեմ արքեպիսկոպոս և Ստեփաննոս եպիսկոպոս Գեղամեան:

Դ

Վեհազնեայ ազգաօգուտ իշխան ադա Մինաս, մեր յատուկ ցաւակից բարեացաբաղդ:

Թէև յառաջ քան զայս՝ ի ձեռն զանազան գրութեանց զգացեալ եմք զքաղցրութիւն ձերդ վեհազնութեան, բայց վերջին գիրն ձեր որ էր ի մայիսի 20-ին գրեալ և մանաւանդ արժանանապատիւ տէր Մելիքսեդեկ աւագ քահանային գիր կենդանի և բերան առ բերան պատմողն համայն գիտաւորութեան բարեացասէր իշխանիդ, լցոյց զմեզ անպատմելի ուրախութեամբ: Ոչ գիտեմք իրաւապէս՝ թէ այդ որքան ցաւակցութիւն և հետևողութիւն է, զոր ցուցանէք

զուք ի կողմանէ ազգին ձերոյ: Եթէ զուք այդքան ցանկայք վասն վերանորոգութեան քաջութեան նախնեաց մերոց սակա բարեգրութեան մեր և սերնդոց, ապա մեք որչափ պարտեմք մեր բարեգրութեանն ցանկալ և հետևիլ:

Հրամայէք նախ՝ իրաւի ափսոսում և զարմանում, որ ձեր անունն ու հարազատութիւնն ոչինչ տեղ չէ երևում և ունայն է անցնում: Պատասխանեմք առ այս՝ մեր ցաւն և մտաւանջութիւնն ևս այդ է, որ մենք մինչև ցյեալին կաթիլ արեանն ոչ խնայեմք զանձինս մեր վասն հայրենեացն Ռուսաստանու և ծարաւի գոլով մշտապէս փափագիմք, որ հաւատարմութիւն մեր յայտնի լիցի առաջի Ամենուորում Աթոռոյ Նորին Կայսերական Մեծութեան, զինչ օգուտ, որ ընդ զբանաւ ծածկեցեալ: Երկրորդ՝ հրամայէք տեղս՝ մենք մելիքունք ժողովել և ի միասին պայծառափայլ գրաֆին խնդիր մատուցանել մեր ապագայական բոլոր գրութիւնն յայտնել, կամ որպէս ծառայելն Նորին Կայսերական Մեծութեան և կամ զինչ հարկ տալն և թէ որպէս ածել ի գործ զգրուող մեր*): Արդարև զայդ

*) Ընդգծումները ինն է: Այս առաջին անգամը չէ, որ Լազարեան իշխանը հայ մելիքներին խորհուրդ

ամենայն համարեա թէ ի մտաց մերոց արտահանեալ արձանացուցեալ էիք ի քարաէզի, և իզձ նախնեաց մերոց ևս այդ էր, որ ի ժամանակաց հետէ յաւիտենական փառաց արժանի Մեծի Կայսերն Պետրոսի հայցէին այսպիսի շնորհ և ողորմութիւն ի յամէնողորմ Աթոռոյն ուսաց: Սակայն նայելով ի ներկայական դրութիւնս մեր, գտանին պատճառք զօրաւոր, որք արգելեն զմեզ զայնպիսի խնդիր մատուցանել նորին պայծառափայլութեանն: Առաջինն այս՝ որ բոլոր ժողովուրդք մեր ցիր և ցան թափառեալք գտանին աստ և անդ տարագիր թէ ի տանս վրաց և թէ ի տանն պարսից, և մեք իբրու մասնաւոր ինչ ժողովրդովք համարեա թէ զանձինս մեր ապրեցուցանեմք և իշխողն հայր-

է տալիս հոյեական գնդեր կազմել և աշխատել յօգուտ սուրական տիրապետութեան: Եւ թէպէտ մելիքները անգազար յիշեցնելով կազարեանին իրանց և իրանց ժողովրդոց ցրեած լինելն, ամեն ինչից զրկելն և տեղական ուս իշխանաւորներից արհամարհելն՝ օգնութիւն են խնդրում: Սակայն Մինաս կազարեանը ոչ մի օգնութիւն չհասցնելով հանդերձ զարձեալ և զարձեալ պահանջում է մելիքնիրից, որ իրանց գնդերն նոր ի նոր կազմակերպեն:

ենի երկրին մերոյ՝ զեռահաս է անդրանիկ որդին Իբրահիմ խանի՝ Մէհթի խանն: Ձի եթէ ներկայիս մեք աստ խնդիր տացուք՝ շատ շատ կարելի է, որ պայծառափայլ զրաֆն (թէ և մեծ շնորհ և խնամ ունի ի վերայ ազգին մերոյ), մինչև Երեւնու տիրապետելն՝ անգործ (անհետեանք) թողցէ, և զեռ խնդիր մեր ի լրումն ցժամանեալ, զիտասցէ Մէհթի խանն և ըստ որում պարսիկ խորամանկ է, նախանձ ինչ ցուցցէ մեզ: Եւ եթէ զայս թողեալ՝ թարց վերահասու լինելոյ նորին պայծառափայլութեանն զխնդիր մեր ուղղակի ի Բարձրագոյն դուռն մատուցանէաք, զիտեմք զի իսկոյն ունին զայն վերազարձուցանել առ կուսակալն սակս վերահասութեան, յայնժամ մեք զամօթ կրելոց եմք:

Ապա մեր զիտաւորութիւնն այս է, և զիտեմք զի վեհագնուութիւն ձեր ևս ունի հաւանիլ, որ տեղզ մի այնպիսի հնար գտանէք՝ թարց (առանց) մեր անդրելոյ՝ ի Բարձրագոյն Դրանէ հրաման եկեսցէ աստ առ պայծառափայլ զրաֆըն թէ սրպիսի է զբուրթիւնն հայոց Արցախ աշխարհին, այսինքն Ղարաբաղու, զբով հարցեք ի մելիքաց յայնժամ մեք բացարձակ թարց երկիւղի տեղոյն իշխան խանին, ունիմք զամենայն զբուրթիւնս մեր զբով տալ, և այս է լի-

նելոց խնդիրն մեր յայնժամ: Նախ՝ որ յամենայն տեղեաց մեր ժողովուրդն և ուայեաթն ժողովեացին ևնթ կառավարութեան իշխանութեան մերոյ: Երկրորդ՝ վերացի իշխանութիւնն խանական և ազգ մեր բաժանեալ լիցի ի տաճկաց, լինելով ենթ վերահասութեամբ տեղւոյն ուսաց մեծաւորին, ով ոք նշանադրեալ լիցի: Եւ երրորդ՝ ամենաողորմածաբար շնորհեալ լիցի մեզ պրուէլէկ (привилегія—արտօնութիւն), որպէս շնորհեալ է Նախիջևտն քաղաքին, որ իրաւունք և դատարանք մեր ըստ ծիսի նախնեաց աւանդութեան մերոյ լինիցի օրինաւոր կերպիւ, և մինչ այսպիսի բացարձակ շնորհ և ողորմութիւն հասցէ մեզ գբաշութիւն նախնեաց մերոց Մուշեղայ և Վարդանայ ըստ չափու կարողութեան մերոյ յառաջ բերել, զունգ կազմել միաւորութեամբ ընդ զօրաց ուսաց և մինչ ցյետին կաթիլ արեան մերոյ զանձինս մեր ոչ խնայել վարն հաւատարմութեան տէրութեանս ուսաց: Նաև ունիմք ամ ըստ ամէ ծառայել (տէրութեանը տալ) չորս հազար չէթվերթի հաց և չորս հազար ոսկի, և կարելի է աւելի ևս ծառայել, եթէ յամենայն տեղեաց ժողովեալ ժողովուրդք մեր բազմացին. յիրաւի եթէ այս բաղձանք մեր լրացի, այնուհետև ունիք տեսանել գբաշութիւն ազգին ձեր, և դուք լինելոց

էք նոր լուսաւորիչ և կատարեալ ծնող հայ ազգին ձերոյ, և մեք նորին փոխարէնն զի՞նչ ունիմք առնել, եթէ ոչ զարձանս բարերարութեան ձերոյ ի մէջ աշխարհին մերոյ յամենայն եկեղեցիս (?!) կանգնեցուցանել, զի կտակ մնացէ որդւոց և սերնդոց մերոց, որ յապագային մեծաւ գովաբանութեամբ ասացեն թէ անա այսպիսի իշխան եւ այսպիսի ժամանակի և գտաւ պատճառ պայծառափայլութեան ազգի իւրոյ: Վասն միոյ անիրաւաբար անկեալ և գլորեալ Հայրապետի այդքան ծախս արարիք *) և այդքան ճշմարիտ հետևողութիւն ցուցիք, (որ

*) Ակնարկուած է Դանիէլ կաթողիկոսին, որոյ ջերմ պաշտպաններից մինն էր Լազարեանը:

Բայց անա այս նամակից երևում է, որ Մինաս Լազարեանը Դանիէլին պաշտպանելու համար՝ ծախսեր էլ է արել: Այդ ծախսերն ուրիշ բան չէին կարող լինել, եթէ ոչ կաշառք, որով Լազարեանը իր կողմն էր գրաւում Պետերբուրգի ազգեցիկ պաշտօնեաներին: Այժմ հարց է առաջ գալիս՝ թէ այդ ծախսերն Լազարեան իշխանը իր գրպանիցն էր հոգում, թէ ազգից ստանում:

Պ. Իսահակեանցից ստացածս նամակների մէջ՝ Թիֆլիզի հայոց առաջնորդ Յովհաննէս ե-

ամենայն լեզու բարեպաշտից առ այդ ձեզ գովաբանէ), ապա որչափ ևս առաւել յաւիտենական արձան թողլոց էք, մինչ այսքան բիւրաւոր ազգ ձեր ի յոգբալի անկմանէն վերականգնեցուցանէք, և սրբեսլիք ցաւալի արտասոււս յերասաց նոցին: Որովհետև Ասուածարար բարե-

պիսկոպոսի մի խոկական նամակը կայ, սեղաւթ Մինաս Լազարեանին՝ Թիֆլիզից 1807 թւականի յունիսի 30-ին:

Այդ նամակի մէջ՝ Թիֆլիզի հայոց առաջնորդը, ի միջի այլոց գրում է՝ «Հրատաշեսուղ եք երեւաւսն զիսաւ իսարց յիւնի փասն սրբազան Հայրապետիս, յօժար եւ, փառք և գոյարիսն Արարչիս, որ քարց զիսաւոց վերծար ի սուրբ Արոտ իւր»:

«Յօժար եւ» բառից մենք ենթադրում ենք, որ Թիֆլիզի առաջնորդը համաձայն է, ուրեմն, որ Լազարեանին վերագարձնէ նրա արած ծախքերն:

Նամակի միւս սողերից աւելի հաւանականութիւն է ստանում այս ենթադրութիւնը:

Եթէ այս այսպէս է, ուրեմն ինչպէս որ Պօլսոյ դեսպանատանը յօգուտ Դաւթին աշխատող Գէորգ Աղայեկովն՝ իր ծախքերն ստանում էր Դաւթից և նրա կուսակիցներից, այսպէս էլ Պետերբուրգում յօգուտ Դանիէլին աշխատող Լազարեանը իր ծախսերն էր ստանում Դանիէլի կուսակիցներից:

բար է Ամենողորմ Կայսրն մեր, և երբէք չունի մեզ զանագանել ի սեպուհ հպատակաց իւրոց, և յաւել քան զայնս ցանկանալով միշտ բարերջանկութեան ձերոյ՝ փամբ ձերզ վեհանձնութեան ամենախոնարհ ծառայք՝ Մելիք Զուռչիտ Մելիք Շահնագարեան, Մելիք Ապով Մելիք Յովսէփեան: ի 1807 զեկտ. 14 ի Թիֆլիզ:

Ե

Վեհազնեայ իշխան աղա Մինաս:

Մենք ներկայ ստորագրողքս՝ զայս վէքիութեան և փոխանորդութեան գիր մատուցանեմք ձեզ *) այսու զիամամբ, զի որովհետև ձերզ վեհազնութիւն մշտապէս կենցաղաւարի ի կայսերապերճ քաղաքս՝ ի Մօսկով և ի Պետերբուրգ ըստ հարազատ մտերմութեան իւրոյ առաջադրիմութիւնս առ Բարձրագոյն Դուռն ամենողորմ Կայսեր և Թագաւորի, և մեք կենցաղավարիմք ի վայրս հեռակայ. սակայն ազգ մեր

*) «Դիւան Հայոց պատմ.» հատորներում գետեղւած բազմաթիւ նամակներից երևում է, որ ժամանակին հայ հոգևորականութիւնը և՛ Լազարեան իշխաններին վէքիլ և փոխադրողն էր կարգել սուս արքունիքի առաջ:

որք ի յԱրցախ աշխարհն, այսինքն ի Ղարաբաղ ի մի սիրտ և ի մի հոգի գոյով կապակցեալ և զհոգաբարձութենէ մերմէ կախեալք, ըստ որում ի բնէ անտի մինչև ցարդ կան հպատակեալք ընդ մեկիքական իշխանութեամբ մերով թէ նաքին և թէ մեք ի դիմաց բոլորեցունցս զձերդ վեհագնութիւնն խնդրեցաք մեզ լինել վէքիլ և փոխանորդ առաջի ամենողորմ Աթոռոյ Նորին Կայսերական Մեծութեան, զի ի պատկանեալ ժամանակի մինչ հարկաւորութիւն պատահեսցի թէ ի կողմանէն մեր և թէ ի կողմանէ ազգին, զի գայնց զոր ինչ դուք հոգս արասջիք մեզ ընդունելի է և հաճոյ: Քանզի այսուհետև ալն ունիմք բարեբշտակութեան, ըստ որում հայրենի աշխարհն մեր ենթարկեալ գտաւ ի ներքոյ սկիպտայի*) Նորին Կայսերական Մեծութեան որոյ Աստուածաբարն քաղցր ահնարկութիւն ունի զմեզ յանգուցանել ազգովին ի բարեդրութեան:

Յամի 1807 զեկտ. 15 ի Թիֆլիզ:

Սոնարն ծառայ՝ պօղպօլկովնիկ Մելիք-Ջիմ-շիդ Մելիք-Շահնագարեան, խոնարն ծառայ Մելիք Ասով Մելիք-Յովսէփեան:

*) Скипетръ

Գերագնիւ աղայ Մինաս գերապատիւ և ողորմած Տէր մեր և բարերար:

Յայանի են մեզ ձերդ ազգասիրութիւն, և իբրև զարեգակն փայլին ընդ ամենայն ծագս երկրի, որպէս հաւատարմացուցանեն մեզ թուղթ ձերդ գերազանցութեան զրեալ առ մեզ ի գանազան ժամանակս, և մանաւանդ զործով իսկ ցուցեալ էք և ցուցանէք յամենայն ժամ. որպէս և ձերով ազգասիրութեամբ ի գուր շարժեալ յանձնարարութիւնս էիք արեալ վասն մեր պարոն գրաֆ Կուտովիչին, և սա ըստ յանձնարարութեան ձերոյ ընկալաւ զմեզ սիրով, և խոստացաւ ևս օգնական լինել յամենայն հանդիպման, և ի Կայսերէն ևս զողորմութիւն հնդրել վասն մեր որպէս յառաջ քայլն գայս ունիմք ձերդ վեհագնութեան յայտնեալ թղթով աստի, և ի վերայ այդ ամենայնի թուղթ ետ մեզ, զի որպէս ծառայեալ են մեզ ժողովուրդքն մեր յերևան, նոյնպէս և այժմ աստ ծառայեսցեն մեզ ևայն. զորոյ թղթոյ զօրինակն ահա ընդ զրոյս առաքեմք առ ձերդ վեհանձնութեան ի գիտել:

Արդ՝ մեր երեսնայ ժողովուրդքն ամենեքեան մեծք և փոքունք ցան և ցիր բնակեալ են

յամենայն գաւառս և ի գիւղորայս Վրացտանու,
 ոմանք ի Թիֆլիզ, ոմանք ի Կախէթ, ոմանք ի
 գիւղորայս Ղազախու և ոմանք ի գաւառն Բամ-
 բակու և շատք ևս յայլ և այլ տեղիս, զորս ի
 մի վայր ժողովելն անհնարին, մանաւանդ թէ
 անկարելի է:

Նախ՝ զի չունիմք հրաման ի պարոն Կու-
 տովիչէն այժմ ի մի վայր ժողովելոյ գնտա:
 երկրորդ՝ չունիմք տեղի բնակութեան առ ի
 գնտա բնակեցուցանելոյ: Եւ երրորդ՝ մեք
 չունիմք կարողութիւն առ նոցա բաւականու-
 թիւն, ըստ որում զամենայն հարստութիւն մեր
 թողեալ յերևան՝ այնպէս եկանք աստ. և ժո-
 ղովուրդք մեր ևս ըստ մեզ գոյաթափ եղեալ,
 բազում աղքատութեամբ և թշուառութեամբ բնա-
 կին՝ ուր և բնակինն:

Ուրեմն զիմորդ կարեն ծառայել մեզ, տա-
 կաւին մեք պարտ եմք կերակրել գնտա և կա-
 ուավարել, որովհետեւ թողեալ են զամենայն ինչս
 և զկալածս իւրեանց յերևան, և աստ ի մէջ
 օտարութեան և պանդխտութեան բազում թրշ-
 ւառութեամբ կենցաղավարին ևայն:

Զինչևիցէ՛ զայստից մեք ոչ կամեցաք այ-

ժրժ պարոն Կուտովիչին յայանել, զի մի ձան-
 ճրութիւն լիցի նորին պայծառափայլութեանն,
 այլ ձերդ վեհագնութեան միայն յայանեմք իբրև
 մեր ցաւակից եւ վշտակից բարերարի: Եւ այս-
 պէս ահա յես գրութեան թղթոյս՝ երթալոց եմք
 կրկին ի Բամբակ, ի բնակութիւնս մեր, եւ անդ
 սպասելոյ եմք մննչեւ ի գարունն: Յայնժամ
 եթէ այցելութիւն լիցի աւերեալ երկրին մերում
 եւ խղճալի ժողովրդոյ մերոյ՝ եւ խաչակիր
 զօրքս անյաղթելի տիրեսցեն հայրենի աշխար-
 հաց մերոց, խնդիր մեր այս է լինելոյ յամենու-
 զորմ Կայսերէն բարի միջնորդութեամբ ձերով,
 զի զմեզ զամենեսին հանդերձ ցրեալ եւ թա-
 փառական ժողովրդովք մերովք վերադարձուցէ
 ի հայրենի աշխարհ մեր, եւ հրամայեսցէ մնալ
 մեզ ի մերում յառաջին կացութեան իւրաքան-
 չիւրքս ի մերում աստիճանի, մեծքս՝ ի մեծու-
 թեան եւ փոքրն՝ ի փոքրութեան եւայլն:

Իսկ եթէ եւ ի գարնան չլինիցի մեզ եւ
 երկրի մերում այցելութիւն, յայնժամ եւս ու-
 նելոց եմք զխնդիր յամենազորմած Կայսերէն
 մերմէ. զի հրամայեսցէ առ մեզ և ամենայն
 ժողովրդոց մերոց զբաւական գետին՝ ուր եւ
 մեք հաճեմք վարելոյ, ցանելոյ, զայգիս եւ
 զտունկս անկելոյ եւայլն՝ հանդերձ արքունի

գանձիւք. զի նորօք ժողովուրդ մեր և մեք կարացուք գործել զերկիր. և օր քան զօր յառաջանանալ և յիւրում ժամանիակին պիտոյանալ և Նորին Կայսերական Մեծութեանն: Բայց մերըս կամք և իղձ առաջինն է, քան թէ վերջինն, զի ըզձալիք են մեզ ի հայրենիս մեր մեռանիլ, քան յօտար յերկրի զանմահ կեանս վարել:

Եւ երրորդ՝ այս է մեր կամք ևս զի որպէս մինչ ցարդ անւանի և հռչակաւոր եմք եղեալ ի դրունս Շահից և Սանից, մելիք և իւզբաշի անւամբ, պատուով և արդիւնաւորութեամբք, նոյնպէս և յամենողորմած Կայսերէզ մերմէ ունիմք խնդրել և աղերսել, զի յատկացուցէ զմեզ իր Կայսերական Մեծութեան նշանաւ և ողորմութեամբ:

Ահա այսօրիկ են մեր կամք և դիտաւորութիւն, զոր յայտնեցաք ձերզ գերազանցութեան, իբրև մեր սրտակցի, ցաւակցի և բարերար և մարդասէր տեառն, և իբրև զօրեղ և հըզօր բժշկապետի, և խնդրեմք զի և դուք զձերզ բարեհաճութիւն մեզ ծանուցիք փութով, առ ի բարի խորհրդատուութեամբ ձերով՝ զինչդիր մեր ըստ այնմ պատրաստել, և վասն բարերջանկութեան ժողովրդոց մերոց, և երկրի մերում, և

որդոց մերոց, ևս հոգալ զբարիս յազգաց յաղգս ի ձեռն քաղցր և բարի իշխանապետիզ մերոյ, և լինել աղօթող յաւիտեանս ժամանակաց վասն բարեացապարս ազգին կենաց ձերզ վեհազնութեան:

Մնամք պատուական և քրիստոսասէր իշխանապետիզ մերում խոնարհագոյն ծառայք՝

Մելիք-Աբրահամ Մելիք-Աղամալեան, Հազարապետ Գաբրիէլ, հազարապետ Ասուածատրեան *):

1806 ի զեկտեմբ. 15.

ի Թիֆլիզ:

2

Գերապատիւ և բարձր բարեճնունդ աղա Մինաս բարերար և Ասուածատէր իշխանապետ և մեր ողորմած աէր.

*) Այս թղթին պատասխան չստանալով՝ Մելիք Աբրահամը՝ 1807 թւի մայիսի 6-ին Թիֆլիզից մի նոր նամակ է գրում Լազարեան Մինասին: Այս նամակը առաջի բառացի կրկնութիւնն է, ուստի և զանց ենք առնում արտագրելու:

Յառաջ քան զայս ի նոյեմբերի 2-ն ընդ երևանցի Տէր-Յովհաննէս քահանային, որ եկն բստ հրամանի ձերում այդր ի Մոսկով, զրեցաք զամենայն զհարկաւոր խնդիրս մեր առ պարոն Քուչուպէյին, զորս և կնքեալ առաքեցաք առ ձեզ:

Բայց զկնի այնորիկ, մեք խնդրեցաք վասն մեր և վասն մեր բնական ճորտից տեղի բնակութեան Կէնճէ (Գանձակ) քաղաքն ի սորին պայծառափայլութենէն, և սա խոստացաւ և կատարեաց իսկ զինդիր մեր, որք և ահա պատրաստեմք երթալ անդ և բնակիլ մինչե սոգորմեսցի Տէր երկրի մերում և մեզ, զարձուք ի բնական աշխարհ մեր յերկիր հայրենեաց մերոց: Եւ թէպէտ Կէնճէն ևս ոչ էր մեզ վայելուչ, այլ սակայն հարկեալ ի տառապանաց և ի թշուառութեանց յաւամայ կամս ընտրեցաք զայն և հաճեցաք ընդ այն:

Արդ՝ աղաչեմք, զի ի գայն Տէր-Յովհաննէսին այդր. և ի տալն ձեզ զթուղթսն զայնոսիկ, պարտիք զուք ի փառս Աստուծոյ զաշխատանս յանձին կալեալ, բանալ զկայսեր թուղթն, նոյնպէս և զՔուչուպէյինն, և բառնալ անտի զառաջին խնդիրն մեր, որ է վասն բնակութեան, և

այնպէս զպահանս ընուլ, և գաւելին խուզել, և կարգաւորել: և բարի և արդիւնարար ձեռամբդ մատուցանել, և զմեզ բարեբաղդ վիճակի հանդիպեցուցանել: Քանզի զկնի Աստուծոյ զձեզ ունիմք մեզ յոյս և ապաւէն. ի ձեզ եմք յուսացեալ, և ձերումդ հզօր ձեռնաւութեան ապաստան եղեալ, և զձէնջ իսկ կախեալ կան բարեբաղդութիւնք և շարաբաստութիւնք մեր, և զուք էք մեր տեղի ապաւինութեան. և ձերզ վեհանձնութիւն պարտի լինել վասն մեր բերան և լեզու և առնել զայն, որ հայեցի յօգուտ և ի շինութիւն մեզ, եւ չէ ինչ զժւարին առաջի ձերումդ պատեականութեան, զի ոչ կամիմք մեք զմելիքական պատիւ մեր եւ աստիճան, զորս ունեցեալ եմք ի տէրութենէն պարսից՝ կորուսանել ի տէրութեան քրիստոնէին, որ զամենեցուն զբարւոք կեալն կամի, և զամենեսին բարեբաղդս առնէ, և արար իսկ, ուստի հայցեմք յամենողորմած Աթոռոյ նորին վերանորոգել զմելիքական պատիւ մեր և աստիճան, և մի թողուլ կոխան լինիլ ի ուամկաց, և իբրև ահարգ ոք և շինական շրջիլ յերկրի աստ: Ընդ որ և յաւիտենական և նշան կայսերական խնդրեմք յառատաբաշխ Աթոռոյ նորին Կայսերական Մեծութեան, քանզի ոչ միայն զմելիքական պատիւ մեր եմք կորուսեալ, այլև զբա-

դուժ արդիւնս և շահս, զորս ստանայաք մեք
 յերևան քաղաքի. ընդ որս թաղեալ եմք և կո-
 բուսեալ գտունս, զինչս, գտեփական կալածս, և
 զամենայն հարստութիւն մեր, և թափուր և
 զուրկ ի պատուոյ, յարդեանց և յսածւածոց՝
 տատանեալ շրջիմք աստ. ահա այսօրքիկ էին
 մեր վիշտք, զորս բացաք առաջի ճարտար բրժ-
 շկապետիդ, և յուսամք հասանիլ խնդրանաց մե-
 րոց, և գտանել զբժշկութիւն վիրաց և ցաւոց
 մերոց. զայլն յանձնելով առողջ դատողութեան
 ձերում:

Մնամ ձերդ վեհանձնութեան ամենախո-
 նարն ծառայ

Մելիք-Աբրահամ Մելիք-Աղամալեան Երե-
 ւանու:

Ի 16 նոյեմբ. 1807.

Ի Թիֆլիզ:

Դաւիթ Դանիէլեան շփոթի պատմութեան
 տեղեակ անձանց և այդ կաթողիկոսներին վե-
 րաբերեալ «Իլան Հայոց Պատմութեան» ըն-
 թերցողներին յայտնի է, որ Դանիէլը կաթողի-

կոս օծւեցաւ, միանգամայն հակառակ հայ եկե-
 ղեցու կանոնին և դարաւոր սովորութեանը,
 Բագրևանդի Երեք Խորան կոչւած վանքում: Եւ
 այդ պարագան ինչպէս իր ժամանակում Դաւ-
 թին և նրա կուսակիցներին, նոյնպէս վերջե-
 րում այդ շփոթները պատմութիւնը ուսումնա-
 սիրողներին, առիթ էր տւել մեղադրելու և դա-
 տապարտելու Դանիէլին:

Դատապարտելով հանդերձ Դանիէլին՝ պատ-
 միչները և ուսումնասիրողները՝ այնուամենայ-
 նիւ վկայում են, որ Դանիէլի այդ վարժունքը
 արդիւնք էր առաւելապէս այն ազդեցութեանը,
 որ նրա վրայ ունեցան նրա պաշտպաններն ու
 կուսակիցները:

Այժմ պ. Իսահակեանցից ստացածս թղթե-
 րում ես պատահեցայ 16 մեծ թերթերից բաղ-
 կացած մի հին ձեռագրի, որի մէջ ժամանա-
 կագրական կարգու նկարագրւած են նոյն շփոթ
 ժամանակի անցքերն, որոց մեծագոյն մասը ար-
 դէն յայտնի են:

Սակայն նրանում կան կէտեր, որոցմով
 լուսաբանում են անցքերի ինչ-ինչ մութ մնա-
 ցած մասերն:

Աւասիկ հէնց այդ կէտերն են, որ մենք ուզում ենք քաղաժարար արտագրել այստեղ:

Ինչպէս յայտնի է՝ մինչև Դանիէլի Բագրեանց հասնելը՝ Դաւիթը ուսւ կառավարութեան Պօլսոյ, Թիֆլիզի և Պետերբուրգի ներկայացուցիչները պաշապանութեամբ և եռանդուն աջակցութեամբ՝ արդէն կաթողիկոս օժուած պրծած էր էջմիածնում: Դժբաղդարար մինչև Դանիէլի Բագրեանց հասնելն՝ քաղաքականութիւնը փոխուած էր և ուսուաց իշխանաւորները աշխատում էին Դաւիթին տապալել տալով Դանիէլին կաթողիկոս նստացնել: Իսկ այս բանը յաջողեցնելու համար՝ միակ ելք այն էր մնում, որ Դանիէլը Բագրեանդում օժւի և իբրև օժեալ՝ Դաւիթին սպօրինի հրատարակելով ինքը անց կենայ գնայ էջմիածին և կաթողիկոսութիւն անէ:

Ուստի հէնց որ Դանիէլը Բագրեանց մտաւ նրան ներկայացան Բայազէթի հայ իշխաններն և Երևանի հայ իշխաններից իրանց ստացած գրութիւնները յանձնեցին Դանիէլին:

Այդ գրութիւններով, — գրում է մեր ձեռագրի պատմիչը, — Երևանի հայ իշխանները խըն-

դրում, թախանձում էին Բայազէթի իշխաններին «զի ի գալն սրբազան Դանիէլ արհւոյն այդը՝ ժողովեալ զեպիսկոպոսունան կողմանցով անյապաղ օժէք գնա կաթողիկոս ամենայն հայոց»: Բայց սակայն, — շարունակում է պատմիչը, — ոչ բնաւ տեղի ետ սրբազանն առ այն բան նոցա ասելով՝ «Մի արասցէ Տէր, եթէ ես ինքնագլուխ արարից ինչ առանց կամաց գլխաւոր քաղաքաց և ազգին իմոյ, քանզի ի սկզբանէ մինչև ցայժմ ոչ երբէք այսպիսի խաբէութեամբ եղեալ է կաթողիկոս. և ոչ օրէնք և կանոնք տան տեղի վասն առանց կամաց և գիտութեան Ազգին անհնար է ինձ յաջ և անհակ ընթանալ, որոց հաճութեամբ մահն առ իս կենաք և անմահութիւն է: Քաւ լիցի ինձ ինքնագլուխ առնել ինչ: Ահա գրեալ ծանուցանեմ ի Պօլիս և սպասեմ խոհական դատողութեան վրձնոյ նոցին, զի եթէ հրամայեսցին ինձ գնալ իբր սպասաւոր ի սուրբ Աթոռն, ուրախութեամբ յանձն առնեմ, եթէ ի վանք ուրեք, կամ ի քաղաք ինչ առաքել բարեհաճեսցին՝ յօժարութեամբ առնում անձն և կատարեմ զԱզգովին եղեալ հրամանն»:

Այս մտքերը, հարկաւ, պատիւ են բերում Դանիէլին:

Դժբախտաբար նա կամքի տէր մարդ չէր՝ ոչ էլ հեռուստեսութիւն ունէր:

Յայտնի է, որ Դանիէլի կուսակիցները պարագլուխները՝ եփրեմ եպիսկոպոսը և Աշտարակցի ներսէս վարդապետն էին: Բայց այժմ աւելի պարզու՞մ է, որ բացի այդ հոգևորականներից, և բացի Երևանի հայ իշխաններից և նրանով լարեւած Բայազէթի հայ իշխաններից, Դանիէլին Բագրևանդու՞մ օժուելու ստիպելիս են եղել նաև ինչպէս Պօլսի միքանի ամիրաններն, նոյնպէս և ուղեւորայ Լազարեան յայտնի իշխաններն և նոյնիսկ հասարակ հայ քաղաքացիներն:

Ահա պատմիչի խօսքերն՝ «...Այլև ի կողմանց Ռուսաստանու քաղաքաց ժողովրդաց, և ի վեհազնեայ եղիագարեանց (վերջերում Լազարեանց), ազա Մինաս և ազա Յովակիմ իշխանաց*) ստեպ-ստեպ գրութիւնք թէ յԻւջբիլիսէ օժանիլ սրբազնութեան քո յոյժ բարւօք է, և ինչպէրեմք զի մի ապախտ արասցես զհայցեալս մեր»:

Այսպէս ահա խիստ ճնշելով ինչպէս ազ-

*) Յայտնի է, որ մի տարի առաջ՝ Յովհաննէս Լազարեանն էլ յօգուտ Դաւթին էր աշխատում համաձայն այն տարւայ քաղաքականութեան պահանջին:

դեցիկ հոգևորականներից, նմանապէս և աշխարհականներից՝ Դանիէլը օժուեցաւ Բագրևանդու՞մ և բանադրելով Դաւթին իր շրջաբերական կոնգակներով՝ իր կաթողիկոսութիւնը հռչակեց:

Սակայն Դաւթի կուսակիցներն՝ մանաւանդ պօլսում լուռ չմնացին:

Իրանցից մինը, — Փիլիպպոս ամիրան, — որ Սագրազամի գառաֆն էր, «ընդ որգւոյն իւրոյ, (ասում է պատմիչը), գաղտաբար գորավիզ եղեալք ընդ վրացի Ստեփան եպիսկոպոսի և եազրճի Գէորգի*) ևայլ համախոհից նոցին, որոց մեծ վստահութիւնս ստացեալք, զքանի մի սրիկայ,» որ անվանեն Փուլիքաճիք, կաշառեալ խրատեցին, զի ի յընթեանու կոնգակին ի սուրբ Լուսաւորիչ եկեղեցին, որ ի Ղալաթիա, մերձ տանն Գէորգի և բնակութեան Ստեփան վարդապետի, համարձակեալ՝ կարասցեն ազադակ տհաճութեան բառնալ ի մէջ սուրբ եկեղեցւոյ և պատառել զկոնդակն: Որոց՝ այսինքն ի կաշառեալ արանց երեք անձինքն յանգգնեալք ի մէջ սուրբ եկեղեցւոյ ի Ղալաթիա, յաուր Վարապայ սուրբ Խաչի բարեկենդանին, որ է 21 սեպ-

*) Տամարա դեսպանի յայտնի ազնետ Գէորգ Ա. զայեկոփն:

տեմբերի մինչ քահանայն ընթեռնոյր զօրհնութեան կոնդակն, գազանաբար արձակեալք ի վերայ՝ յափշտակեալ պատառեցին*) յերևս մասունս, յայնժամ բազմութիւն ժողովրդոց գրոճուեալ ի վերայ յանգուզն սրիկայից՝ յոյժ առաւել գանակոծ արարեալ արիւնաթաթախ տարան ի տուն գնոսա չավուշիչն դալիոնճաց, զի և նոքա տարեալք առ իշխողսն իւրեանց դատեսցեն»:

Յիշեալ ձեռագիր պատմութեան մէջ կայ և Յովհաննէս Լազարեանի մի նամակը, որ նա 1801 թ.ի սեպտեմբերի 6-ին Ս. Պետերբուրգից գրում է իր Մինաս և Յովակիմ եղբայրներին:

Ահա այդ նամակը.

«Յուսամ, որ սրբազան Եփրեմ արքեպիսկոպոսն ժամանեալ իցէ ի Մոսկով, ասել նմա, որ նորին կայսերական Մեծութիւնն հաստատեալ է ըստ ըզձի ազգին, և գրեալ իսկ է ի մե-

***) Հայր Գիւտ Աղանեանց «Իւրան Հայոց պատմութեան» է. գրքի «Համառօտ ակնարկ»-ում, ժԹ կրեաւում ասում է, որ կոնդակը եկեղեցում պատուել է Դաւթի կուսակից մի քահանայ իբր թէ:

Ծան. հեղ.

ծրն Պօլիս առ Թամազ զեսպանն, զի մի թողցէ հանել Ֆէրման վասն Դաւթին, և թէ հանեալ ևս իցէ, փոխարկել տայցէ: Եւ այժմ պարտ է սրբազան Դանիէլին իմացում առնել, որ այսուհետե կնամանէ է կախեալ պատրիարքական իշխանութիւնն: Նաև հրաման է երեւանու խանին մի բնաւ ձեռնամուխ լինել արգելման ի յառաջ մատչումն Դանիէլին, զի նմա ոչինչ զոյ գործ: Իսկ Եփրեմ արքեպիսկոպոսն հաստատեալ է լինել առաջնորդ հայոց Ռուսաստանու: Ուրեմն խնդրեմ ի ձէնջ, որ յամենայն գործունէութիւնըս և յամենայն պատահմունս նպատտ և ձեռնառու լիջիք զորին սրբազնութեան, կացուցանելով զզա (այսինքն՝ ներկայացնելով, ծանօթացնելով) առաջի նորին բարձր սրբազնութեան տեառն Ամբրոսիոսի միտրապօլիտին: Այլև Տրօշինցիօյին ենարալ պրօփօրօրին, քնեազ Ալէքսի Բորիսիչ կուսակիւնին և այլոց, ում և պատկանի»:

Ձեռագիր պատմութիւնը, ինչպէս վերևում յիշել ենք, 16 թերթից է բաղկացած, բայց դա կիսաս գործ է: Սկզբից էլ, վերջից էլ թերթեր պակասում են, ուստի և հեղինակի ով լինելն

նշանակեալ չէ: Բարեբաղդաբար թերթերի մի երկու տեղում պարզ ասած է, որ հեղինակը Դանիէլի սպասաւորն է, որ անձամբ թերթեր է տարել Պօլիս, այնտեղից էլ պատասխաններ բերել. գրած ու պատմածներին էլ ակնատես է եղել:

Եթէ այդպէս է, ապա ուրեմն ոչ մի կասկած չկայ, որ մեր կիսատ ձեռագիր պատմութեան հեղինակը Գիւմրիւշխանցի Մանուէլ (Շահինեան) վարդապետն է, Դանիէլի միւս սպասաւոր, — Աշտարակեցի Ներսէս վարդապետի ընկերը:

«Դիւան Հայոց պատմութեան» Դ. գրքի Ի. երեսից երևում է, որ այս ձեռագիր պատմութեան մի օրինակն ևս (երևի ամբողջը) գտնուում է արժ. Գիւտ ա. ք. Աղանեանցի մօտ, որից նա օգտուել է Դ. հատորը հրատարակելիս:

է

Աստուծոյ զօրացուցիչ ողորմութեամբ՝ *)

*) Արժ. Ստոիկեան քահանայի «Հորիզոնում» տպւած յօդւածը Հիւսիսային Կովկասի հայերի մասին՝ ինձ առիթ տւեց թարգմանել և հրատարակել: Պաւէլ

Մենք Պաւել առաջին Կայսր և ինքնակալ համայն Ռուսիոյ, — Մօսկօվի, Կիեվի, Վլադիմիրի (Թւած է ընդարձակ տիպոսը) և այլոց, և այլոց և այլոց:

Դէրբէնդում և Մասկուրսկում բնակող մեր ամենահաւատարիմ հայազգի հասարակութիւններին՝ առհասարակ ամենքին և առանձինն՝ իւրաքանչիւրին՝ Մեր Կայսերական ողորմութեան խօսքը:

Դէրբէնդի և Մասկուրսկի հայերի կողմից մեզ ներկայացողները հնդրին զիջանելով և Մեր Կայսրական հովանաւորութեան ներքոյ Ռուսական Կայսրութիւնում գտնող հայիական համայնքներին, սրտնք իրենց գաղթած օրից ի վեր յայնաի են օրինակելի աշխատատիրութեամբ և շինարարութեամբ և ընտիր վարք ու բարքով, — մեր նոր և առանձին ուշադրութեանը արժանացնելով՝ ներկայ կայսերական հրովարտակով ամենաողորմածաբար ոչ միայն հաստատում ենք Մեզանից և մեր նախնիքներից նրանց շնորհւած իրաւունքներն ու արտօնութիւններն, մեր միւս բոլոր հաւատարիմ հպատակների հա-

Կայսեր ներկայ հրովարտակի պատճէնը, որ վերցրած է Ս. Սաչ-քաղաքի ստոիկեանաբանի արխիվից:

ւասար, այլ նաև նրանց առաւել և խրախուսե-
լու և իրենց ձեռնարկութիւններով միւս գաղ-
թականներին օրինակ դասնալու համար, — շնոր-
հում ենք այս հայկական համայնքներին՝ նրանց
բարեկեցութեան համար, այլ և այլ նոր արտօ-
նութիւններ ըստ այսմ:

Առաջինն՝ վերջին պարսկական պատերազմի
ժամանակ Իէրբէնդից դուրս եկած հայերին
տրւած տասնըփնց հազար օրավար գետնի մէջ
եղած հինգ հազար օրավար անպէտք գետնի փո-
խարէն՝ ամենատորմածաբար հրամայում ենք,
չափել և տալ նոր գետին՝ արքունի այն գետին-
ներից, որոնք հայերի գիւղերի մօտերին են
գտնուում այն չափով, որ ամեն մի գիւղացի
անհատի երեսուն օրավար բաժին հասնի: Այս
տարածութեան մէջ գտնուած ձկնորսարաններն
և առհասարակ ամեն տեսակ ստացւածը նւի-
րում ենք ի մշտնջենաւոր շահեցողութիւն ամ-
բողջ հասարակութեանը, առանց որ և հարկա-
պահանջութեան յօգուտ գանձարանին:

Իսկ եթէ նրանց գիւղերի մօտ եղած ար-
բունի գետինները՝ բաւական չեկան վերօյիշեալ
չափով բաւարարել նրանց, — այն ժամանակ ու-
րիշ տեղերի արբունի «գետիններ»-ով լրացնել
պակասորդը:

Երկրորդ՝ պատճաշաւոր հիմնարկութիւննե-
րին և Աստրախանի նահանգապետին, ամենատ-
ղորմածաբար հրամայում ենք շինութեան հա-
մար հարկաւոր քանակութեամբ փայտ բաց
թողնել գաղթականներին:

Երրորդ՝ այն գաղթականներին՝ որոնք ի-
րենց ընդունակութեամբ ուզում են քաղաքում
սպրել և արհեսաներով ու վաճառականութեամբ
պարապել, — այդպիսներին էլ ամենատորմածա-
բար թոյլատրում ենք քաղաքը հիմնել Հին Մա-
ժար կոչւած վայրում և անւանել Ս. Սաշ
քաղաք:

Չորրորդ՝ ներկայ 1799 թւի յունւարի 4-ին
և ապրիլի 15-ին Մեր աւած հրովարտակներով՝
վերահաստատելով Մեր նախորդներից տրւած
իրաւունքներն հայերին ազատօրէն իրենց քրիս-
տոնէական կրօնն Մեր կայսրութեան մէջ պաշ-
տելու, այժմ ամենատորմածաբար թոյլատրում
ենք նրանց՝ իրենց գիւղերում շինել վանքեր, ե-
կեղեցիներ, գանգակաաներ և այլ եկեղեցական
շինութիւններ՝ համաձայն իրենց օրէնքին:

Կրօնի վերաբերեալ այս ամեն գործի առ-
թիւ՝ կախում պիտի ունենան Արարատեան աշ-

խարհի էջմիածնի վանքում գտնուող Ղուկաս կաթողիկոսից և Մեր Կայսրութեան մէջ ապրող Յովսէփ արքեպիսկոպոսից, որ 1793 թևականի փետրւարի 26-ին տրւած Մեր Կայսերական հրովարտելով հաստատուած է կաթողիկոսական փոխանորդ, և որի հօտն են կազմում Ռուսաստանում ապրող բոլոր հայերն և որից կախումն ունի բոլոր ռուսահայ հոգևորականութիւնը:

Եւ որովհետև Մեր Կայսրութեանը դիմել ցանկացող գաղթականների թւի շատանալով՝ եկեղեցիների թիւն ևս կը շատանայ, ուստի թէ եկեղեցիների բարեկարգութեան և թէ հոգևոր և աշխարհիկ անձինքների կարևոր գործերին ընթացք տալու համար՝ Մենք բարուք համարեցինք Աստրախանում գտնուած հայոց հոգևոր Կոնսիստորիայի համար այս շտառը հաստատել:

Մէկ վարդապետ՝ իբրև նախագահ, երեք անդամներ առագ էրէցներից, երկու ատենադրպիրներ, — մէկը հայերէնի համար, միւսը ռուսերէնի, չորս հատ էլ գրագիրներ զիւանաւորան համար:

Այս Կոնսիստորիային պիտի ենթարկւին այն բոլոր եկեղեցիները և ծխականներն, որոնք

ապրում են՝ Ս. Պետերբուրգում, Մոսկվայում, Աստրախանում, Ղզլարում, Մօզդոքում, Գէորգիեվսկ բերդաքաղաքում և Մաթարում կամ Ս. Սաչ քաղաքում, Նախիջևանում, Խրիմում, Գրիգորիօպոլում և բոլոր այն նահանգներում, որոնք Լեհաստանից Ռուսաստանին են անցել:

Այս ամեն քաղաքների մէջ հիմնել միւսի հոգևոր Կառավարութիւն ըստ որոշման Արքեպիսկոպոսին:

Եւ այս ամեն հոգևոր հաստատութիւններն ինչպէս և Ռուսաստանի բոլոր եկեղեցիներն ու ծխական համայնքներն՝ ենթարկւելու են Ռուսաստանում ապրող վերոյիշեալ Կաթողիկոսական փոխանորդ Յովսէփ արքեպիսկոպոսի անմիջական կառավարութեան, որ, իր հերթում, կախումն է ունենալու Արարատեան պատրիարք-կաթողիկոսից:

Հինգերորդ՝ Դերբէնդից զուրս եկած հայերը երբ Ս. Սաչ քաղաքն հիմնեցին՝ և իրենց պետքերի համար տասներկու հազար օրավար գետին ստացան իրենց ջրերով և անտառներով, յայն դէպս ամենաողորմածաբար հրամայում ենք այդ քաղաքում հիմնել հայկական դատա-

րան Մագիստրատ անունով, որին թող ենթարկելին և նրանից կախում ունենան՝ Դիրբէնդի և Մասկուրսկի այն հայերն, որոնք կը ցանկանան տեղաւորել Մաժարում, նոյնպէս և այն նորերն, որոնք այժմ Ղզլարից վերև իրենց արբւած գեանի վրայ գիւղեր են շինում Ս. Խաչ քաղաքի իրաւունքով:

Այս գատարանը քննելու և վճռելու է գատաստանական ամենատեսակ գործեր իւրոց յեզով*) կատարանցի իրեւց օրենքներին եւ սովորոթիւններին:

Դատաւոր լինելու են հասարակութիւնից ընտրուած անձինք, որոց ձեռքի տակ լինելու են հարկաւոր թւով քարտուղարներ և զիւանական ծառայողներ, որոց ամենքի ծառայութիւնն էլ հաշւելու են համաձայն շտատին այն նահանգին ուր հասարակութիւնն է գտնուում:

Այս գատարանը ենթարկելու է նահանգական կառավարութեանը և նահանգապետին:

Եւ ամեն մի գատարան կամ Մագիստրատ, ինչպէս և վերոյիշեալ հոգևոր Կոնսիստորիան,

*) Ընդգծումները իմն են:

ունենալու են կառավարութիւնից իրենց տրուած կնիք:

Վեցերորդ՝ հայկական համայնքներ կազմող պետական այս ժողովրդականներին՝ դասակարգերի բաժանելուց յետոյ՝ ամենաողորմածաբար ազատում ենք նրանց, — ինչ կոչման էլ որ պատկանելիս լինի, — պետական հարկերից և ծառայութիւններից, համաձայն ներկայ 1799 թւի ապրիլի 15-ին տւած մեր հրովարտակին, մինչև տասը տարի ժամանակաւ: Իսկ այդ ժամանակը լրանալուց յետոյ՝ նրանք պարտաւորուած են վճարել ամեն տարի Մեր գանձարանին՝ վաճառականները իրենց զրամագլխից ըուբլուց մէկ տոկոս, մեշչանները և արհեստաւորները՝ ամեն մի ծուխից երկու ըուբլի: Իսկ գաւառի գիւղացիները, այն է՝ հողագործները, որոց ամէն մէկին երեսուն օրավար գետին է տրւելու պարտաւոր են ամեն մի օրավարի համար վճարել տարեկան հինգ կոպէկ այժմեանից սխեալ ընդ միշտ:

Միջոցներ ունեցող հողագործներին թոյլատրում ենք իրենց տրուած գետինների վրայ և իրենց հաշւով շինել տներ, խանութներ, ամբարներ, դործարաններ և ամեն բան, ինչ որ իրենք

են կամենում: Եւ այդպիսի շինութիւնները ընդ միշտ ազատում ենք զինւորներ բնակեցնելուց ժամանակաւորապէս, ի բաց առեալ այն դէպքերն, երբ զինւորների խմբերն ստիպւած են լինում հայկական գիւղերի մօտերովն անց կենար:

Գալով զինւոր տալուն, կամ զինւորակոչութեան դրամ-դրամ վճարելուն, — այդ պարտաւորութիւններից հայկական համայնքներին ընդմիշտ ազատում ենք ամենաողորմածաբար, ի բաց առեալ այն դէպքերն՝ երբ այս կամ այն հայր ինքը կը ցանկանայ մեր ծառայութեան մէջ մտնել:

Եօթներորդ՝ երբ ամեն մի հայ ընդունուց իր ընտրած դասակարգի մէջ, — այն ժամանակ Մենք ամենաողորմածաբար թոյլատրում ենք, որ նա մշտնջենապէս սերնդից սերունդ օգտել Մեր Կայսրութեան ընդհանուր օրէնքներով, այսինքն՝ որ նա ազատ առևտուր անէ թէ ցամաքի և թէ ծովի վրայ թէ Մեր Կայսրութեան սահմաններում և թէ սահմաններիցը դուրս առանց հարկ վճարելու կայսրութեան սահմաններում արած առևտրի համար:

Բացի դրանից ամեն մի հայի թոյլատրում

ենք ծովային առևտրական նաւեր շինել իր հաշուով, հարկաւոր և օգտակար գործարաններ և արհեստանոցներ հիմնել, պաղատու պարտէզներ տնկել: Այս պարտէզների, նոյնպէս և այգիների պտուղներից պատրաստած խմիչքներն՝ փոքր չափերով գործածել իրենց անային պէտքերի համար, իսկ տակառներով անարգել վաճառահանել ներքին Ռուսաստանում առանց որևէ հարկ վճարելու գանձարանին մինչև մեզանից շնորհած արտօնեալ ժամանակամիջոցի լրանալը: Իսկ այնուհետև վճարել այն հարկը, ինչ որ ընդհանրութեան համար կը սահմանւի:

Մի խօսքով՝ ամեն մի հայի իրաւունք է տրւում, պարապել իր ազատ կամքով և ըստ իր միջոցների, ինչ տեսակ գործով որ ցանկանում է, վայելելով Մեր ինքնակալական զանոյքի և Մեր օրէնքների հովանաւորութիւնը:

Ութերորդ՝ ի վերջ Մեր այս կայսերական հրովարտակին Գերբէնդի և Մասկուրսկի հայերին շնորհած իրաւունքների, արտօնութիւնների և ազատութիւնների նկատմամբ հրամայում ենք Մեր բոլոր զինւորական և քաղաքացիական իշխանաւորներին և առեակական հիմնարկութիւններին, որ յիշեալ հայկական համայնքներին և

նրանց յաջորդող սերունդներին ոչ միայն չար-
գելել օգտելու իրենց շնորհած գեախններով,
ստացածներով և արածուլթիւններով, այլ նաև
պէտք եկած ժամանակը պահպանել և զգուշա-
ցնել նրանց ամեն տեսակ վնասաբար գէպքերից
և գործերից:

Իսկ նրանց հոգևոր և մարմնաւոր դատա-
րաններին ցոյց տալ ամեն տեսակ աջակցութիւն
և հովանաւորութիւն:

Ի հաստատութիւն Մեր այս կայսերական
ողորմութիւններին, — ներկայ հրովարտակը ան-
ձամբ ստորագրեցինք և Մեր պետութեան կնի-
քովը դրօշմել հրամայեցինք:

Տրւած է Փատչինօ քաղաքում Քրիստոսի
Ծննդեան հազար եօթն հարիւր իննասուն և ինն
թւականի հոկտեմբերի 28-ին, իսկ Մեր Թա-
գաւորութեան երրորդ տարին:

(Ստոր.) Պաւէլ:

է

Վեհագնեայ իշխան

Իմ ողորմած տէր.

Թէպէտ յառաջ քան զայս քանի գրով գըր-
եալ եմ առ վեհագնութիւն ձեր զպատասխանիս
գրութեանց ձերոց, իսկ որովհետև ոչ գիտեմ
հասանելն այնոցիկ առ ձեզ, վասնորոյ այսու
համապատասխանեմ այնց ամենից զոր դուք
գրէք:

Որով նախ անաճիք թէ զիմօրդ ոչ յիշի գա-
նուն մեր ի շարս իշխանացն Վրաց յատկացե-
լոց ի մէջ պատերազմի, առ այս ասեմ խայթո-
ցիւ, թէ և մեք մեղքունքս Խամսայու տուաւել
քան զնոսս յատկացաք ի մէջ պատերազմի, և
առաւելագոյն պարգևաց և շնորհաց ևս էաք ար-
ժանի, սակայն արմատացեալ նախանձն ի սրտի
հանգուցեալ քնիազ Յիցիանովի առ ազգն Հայոց
ոչ թոյլատրեցին նմա բացայայտել առ ամենա-
զլթած կայսերն զյոզնաւէտ ծառայութիւնս և
զջանս մեր, զորս ցուցաք, որպէս ի ժամ առ-
մանն Փանձակու նոյնպէս և յուղևորակս յերև-
անու և Շրուանու, ուր տեսանելով զի միայն

ընդ զօրաց իմոց բարևք կարգադրութեամբ և անակնկալ ծառայող Տէրութեան ամենայն Ռուսոց հարկադրեալ իրաւանց՝ խոստացաւ ինչդրել ի կայսերէն վասն իմ զդրօշակս, զորս ստանալոց էի թարծ կարծեաց եթէ ոչ պատահեցեր նմա այնպիսի ապերջանկութիւնս.

Զկնի մահւան նորին գտանելով իմ աստ, և գիտելով զամենայն շար խօղումնս պարտից առ ի ամբացուցանել գնորարտաց աշխարհն Ղարաբաղու, ետու գրութեամբ զքանի մի գիտաւորութիւնս իմ Տեառն գէնէրալ Մայիօր Նէսվէտայովին և գնացի ես յամբոցն Շուշուայ և միացայ ընդ զօրացն ուստաց. պարսիկք լսելով զմահը քնիազ Յիցիանովին բազմաթիւ զօրօք ընդ առաջ ընթացութեամբ Աբաս Միրզա որդւոյն Բաբահանի, արտուրանօք ժամանեցին ի Ղարաբաղ և միացան ընդ համայն տաճկաց անդ բնակելոց, և յառաջագրեցին սրախողխողել զամենայն զօրս ուստաց և հայոց յամբոցն գտանելոց, առ որ համաձայնէր և արբապետողն Իբրահիմ խան, որով ընկալաւ պատիժս ըստ արժանւոյնս. յայմ միջոցի գէնէրալ մայօր Նէսվէտային հաւանեալ զգիտաւորութիւնս իմ առաքէ զՏարօյեկցի պօլկն ի Ղարաբաղ յօգնութիւն զօրացն ուստաց անդ գտանելոյ որով եկեալ ի

Գանձակ առնու ընդ ինքեան գկարակին պօլկօլիկ ընդ զօրօք աճապարեն առ յօգնութիւն մեր, և գորով նոցա տակաւին ի ճանապարհի, գրեն առ իս ընդ առաջել նոցա զօրնք իմովք, ըստ որոյ թողեալ իմ զբաւական զօրս ընդ մնացեալ զօրացն ուստաց առ ի պահպանութիւն ամբոցին, գնացի զօրօք և միացայ ընդ նոսա և զկնի երից աւուրց ի միասին պատերազմեցաք և յօգնականութեամբն ամենաբարձրելոյն Աստուծոյ կատարելագէտ յաղթահարեցաք զթշնամիս մեր և յետս դարձուցաք, այնպիսի իմն արշաւանօք մինչ զի 20 հազար արք հեծելագօրք սարսափելի երկիւզիւ անցին ընդ գետն Երասխ:

Ղէնէրալ մայիօր Նէբալսինն Շէֆն նոյնոյ Տրօլիցկի պօլկի պօլկօլնիկ Կարէգին Շէֆն Եագրիպօլկի, ատանելով ի մէջ պատերազմի զքաջութիւն զօրաց իմոց, և զհաւատարմութիւն իմ (որով հասուցանէի զպաշարս վասն զօրացն ուստաց ի ժամ պակասութեան հացի և ցուցանէի զայլ բազմադիմի ծառայութիւնս) յոյժ հաւանեցան, և մանրամասնաբար գրելով զայսուսիկ ամենայն հաւատարմութիւնս և զժառանգութիւնս իմ առ նոյն գէնէրալ մայիօր Նէսվէտայովն՝ ինչդրեցին ներկայացուցանել առաջի ամենողորմած Կայսերն մերոյ, սակայն ըստ ապերջ

Ղանկութեան իմոյ ոչ գիտեմ թէ որոյ պատճառաւ ոչ ներկայացոյց, որոյ աղագաւ ի գալն իմ աստ խնդիր մատուցի նորին պայծառափայլութեան զբաֆ Իւան Վասիլիչ Գուտուզովին, որ և ահն ունիմ ի սէր ձեր և ազգին մերոյ (որոյ ցուցանէ խնամս) վարձատրեսցէ ինձ վասն այնց ամենից զոր արարի եթէ յօգնութիւն Տեառն ամենակալի և վեհագնութեան ձերոյ՝ ժամանեսցէ ի վերայ իմ:

Երկրորդ՝ զրէք թէ զիմորդ ոչ կազմմեք զգունդ առ այս պարտիք հաւաստի լինել որ դիւրիւ կարէաք զայս առնել թարց օգնականութեան ումեք, (եթէ ունիցէի առաջին փարթամութիւնս և գժողովուրդս, որք ի պատճառս գալստեան Ադայ Մանմադ խանին՝ սոփու և ժանտախտի ցիր և ցան եղեն ի Շրուան և ի Վրացտուն, քանզի հայրն իմ և նախնիքն մեր միշտ ունեցեալ են առ ընթեր իւրեանց զայնպիսի գունդք զորս դուք պահանջէք յինէն, ըստորում երկիրն Ղարաբաղու տիրապետեալ են ինքեանք և բոլոր հայք և տաճիկք հպատակք են լեալ նոցա:

Ուստի՝ եթէ վեհագնութիւն ձեր բազմաք զի ազգքն հայոց գերծցի համանգամայն ի բըռնութենէ բարբարոսաց և համաժողովեսցին ի

ընիկ հայրենիս իւրեանց՝ և ունիցին զգունդս և բարուքապէս ծառայեսցին երկրորդ փրկչին իւրեանց Ամենագթած Կայսերն մերոյ, ուրեմն խնդրեա զի նախ հրամայեսցէ վերագառնալ ի ընիկ հայրենիս իւրեանց ամենայն ցիր և ցան եղեալ ժողովուրդքն մեր ի Շրուանու և ի Վրացտանու: Երկրորդ պատ լինել ըոցա ամենայն հարկապահանջութեանց և ի ծանրութեանց երեք ամ ժամանակաւ, երրորդ՝ ազգն հայոց մի լիցին ի ներքոյ իշխանութեան տաճկաց, ըստ որում նոքա ոչ կարեն մնալ միշտ ի հաւատարմութեան առ տէրութիւնս Քրիստոսապսակ Կայսերն մերոյ, այլ ջանան օր ըստ օրէ նւագեցուցանել զազգն հայոց՝ առ ի դիւրապէս ներգործել զչար դիտաւորութիւնս իւրեանց և չորորդ՝ շնորհեսցէ զումարս՝ որով կարողասցուք պատրաստել զգէնս վասն կազմելի գնդոյն, զի առանց իմիք կարոտոյ պատրաստի լիցին ի յապաղայ պատերազմունս ընդ զօրացն ուստաց ցերասի գեան: Զայսպիսի ոգորմութիւն առնելով ամենագթած Կայսրն մեր, արդարեւ՝ վերանորոգելոց է զգօրութիւնս ազգին հայոց և հարկադրելոց է նոցա յամենայն ուրեքէ գալ և բնակիլ ի ներքոյ ասենաքաղցր հովանաւորութեան իւրոյ Կայսերական Մեծութեան:

795

Ես ոչ հարկաւոր համարիմ խնդրել ի վե-
հագնութենէ ձերմէ յոգսունակել առ կատարումն
սորին, ըստ որում դուք հազարապատիկ քան
զիս ջանայք սակս պայծառութեան ազգիս հա-
յոց, և ի տուէ և ի գիշերի միշտ ի նոյնն պա-
րապէք, ուրեմն թարց իմոց խնդրանաց՝ անձան-
ձիր հեռակելոց էք առ ի կատարումն գործոյս, և
թողլոց էք ի վերայ աշխարհի յիշատակ և ար-
ձան գայսպիտի բարերարութիւնս ձեր ազգին
մերոյ, վերջապէս խնդրեմ ի վեհագնութենէ
ձերմէ ծանուցանել ինձ զիարդութենէ անձինդ
պատուականի:

Եւ այլն անթերի վերապատուութեամբ և
կատարեալ անձնամատոյցութեամբ ունիմ պա-
տիւս մնալ

Ձերդ վեհագնութեան

Ոգորմած Տեառնդ իմոյ

Ամենախոնարհ ծառայ

Մելիք-Զիմշիկ Մելիք-Շահնազարեան

Դեկտեմբեր 2-ին

1806 թւին

Թիֆլիզ:

